

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՍԵՐԻԱ № 1

---

ԷԴ. ԱՂԱՅԱՆ

ԼԵԶՎԻ ԺԱԳՈՒՄԸ

ԵՎ

ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

---

ԵՐԵՎԱՆ

1948



КНИГА ДОЛЖНА БЫТЬ  
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ  
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

---





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ՍԵՐԻԱ № 1

401  
Ա-44

ԷԴ. ԱՂԱՅԱՆ

ՅՏՈՒԳԼՈՐ Է 1961 թ.

ԼԵԶՎԻ ԾԱԳՈՒՄԸ  
ԵՎ  
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳՕ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1948



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի  
Նախագահության կտրգադրությամբ:

Հայկական ՍՍՌ ԳԱ Պրեզիդենտ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պրակի խմբագիր՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

А  $\frac{\pi}{12662}$

ЭД. АГАЯН

Происхождение и развитие  
языка

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1948 г.



## Ա. ԼԵԶՎԻ ԾԱԳՈՒՄԸ

Հարցի պատմութիւնը. — Լեզվի, ինչպես և մարդու, ծագումնաբանականը է մարդկութեանը շատ վաղ ժամանակներից, և մարդիկ, տարբեր ժամանակներում, իրենց աշխարհաճանաչողութեան համապատասխան, տարբեր կերպով են բացատրել ինչպես մարդու, այնպես էլ լեզվի ծագումը:

Այս հարցի հնագույն բացատրութեամբ լեզուն դիտւում է իբրև որևէ իմաստունի կամ տոտեմի գլուխը, և կամ՝ ուղղակի որպես աստվածային շնորհ: Այդ բացատրութեանները պահպանվել են բազմաթիվ ժողովուրդների էպոսներում:

Լեզվի ծագման գիտական բացատրութեան փորձերը գտնում ենք հույն փիլիսոփաների մոտ: Դրանցից ոմանք գտնում են, որ լեզուն բնականից մարդուն հատուկ և բնականորեն ծագած երևույթ է, ոմանք էլ, ընդհակառակը, գտնում են, որ լեզուն արդյունք է հասարակական պայմանավորվածութեան, իբրև թե երբեմն իմաստուն մարդիկ պայմանավորվել են առարկաներին ու երևույթներին անուններ տալու:

Հետագայում էպիկուրյաններն առաջ են քաշում «ձայնարկութեանների» տեսութեանը, գտնելով, որ բոլոր բառերն առաջացել են բնագոյական ճիշդից ու բացագոյանութեաններից: Դրան հակառակ ստոյիկներն առաջ են քաշում «բնածայնական» տեսութեանը, պնդելով, թե բոլոր բառերն առաջացել են բնածայնական բառերից: Հետագայում, միջին դարերում, լեզվի ծագումնաբանականը հանրապես քննութեան չի ենթարկվում: Ժամանակի սխալաստիկ մտածողներն անվերապահորեն ընդունում են Աստվածաշնչի առասպելը, ըստ որի լեզուն աստվածային շնորհ է: Որոշ անհատներ միայն (Գրիգոր Նիսեցի՝ XV դար, Ռոսցելլին՝ XVI դար և ուրիշներ) այս կամ այն չափով հակադրվում են դրան, գտնելով, որ աստված մարդուն տվել է միայն խոսելու կարողու-



թյունը, իսկ մարդը գործադրել է այդ կարողությունն ու ստեղծել լեզուն:

Լեզվի ծագման հարցի լուրջ քննությունն սկսվում է միայն 18-րդ դարից: Ժամանակի փիլիսոփաները (Լոկկ, Հոբս, Լայբնից) առաջ են քաշում այն տեսակետը, թե լեզուն ստեղծված է մարդկանց կողմից՝ անհրաժեշտության պահանջով:

Սակայն այդ խնդրի պիտական քննությունը հատկապես զարգանում է լուսավորիչների դարաշրջանում՝ 18-րդ դարի երկրորդ կեսին: Նրանցից ոմանք (օր. Ռուսո) փորձում են գտնել լեզվի հասարակական հիմունքը և բացատրում են նրա ծագումն ու գոյությունը «հասարակական դաշինքով», պայմանավորվածությամբ: Բայց այդ տեսության հիմնադիրները դիտում էին նախամարդուն իր մեղմության մեջ, իբրև վայրի անտառներում մենակ ապրող վայրենու, որով և լեզվի ծագման իսկական հասարակական հիմունքը մթազնվում էր:

Այս տեսությունը քննադատվեց նույն ժամանակի ուրիշ մտածողների կողմից (Մոնրոզզո, Հերդեր), որոնք առաջ քաշեցին այն դրույթը, որ լեզուն առաջացել է մարդկանց «ներքին կյանքի» պահանջով և առաջացել է մարդկային մտածողության հետ: Այս ճիշտ դրույթի հետ այդ մտածողներն ունեին այն լուրջ սխալը, որ լեզվի ու մտածողության առաջացումը դիտում էին հասարակությունից դուրս, իբրև անհատական երևույթ, իսկ լեզվի անհրաժեշտությունը բացատրում էին մարդու՝ մտածելու և խոսելու բնատուր կարողությամբ:

Այս ինդիվիդուալիզմը գերիշխում է նաև 19-րդ դարի լեզվաբանական տեսությունների մեջ, չհաշված առանձին բացատրությունները: 19-րդ դարում էլ՝ ելնելով անհատի մտածողության ու լեզվի իրողություններից՝ դիտում են լեզուն հասարակական կյանքից կտրված. կրկին առաջ են քաշվում «բնածայնական» և «միջարկությունների» տեսությունները, որ նոր ժամանակի մտածողները փորձում են հիմնավորել անհատի նմանողական ճիշերով (Վիտնեյ) կամ անհատի հոգեկան գործունեությամբ (Շտայնթալ): Սրանց զուգընթաց, իհարկե, փորձեր են կատարվում նաև լեզվի ծագման հասարակական նախադրյալները գտնելու ուղղությամբ, բայց այդ փորձերը հաջողությամբ չեն պսակվում: Իրանցից առավել ուշադրավ է Լուդվիգ Նուարեի «աշ-



խառանքային ճիշերի՝ տեսությունը, որի մասին կխոսվի ստորև: 19-դ դարի լեզվաբանության մատուցած որոշ ծառայությունն այն է, որ նա շեշտում է լեզվի և մտածողության կապը, իհարկե իդեալիստորեն, և, որոշ դեպքերում, կապում լեզվի ծագումը աշխատանքի հետ. բայց նույնիսկ այդ դեպքում էլ 19-րդ դարի լեզվաբանությունը կապում է լեզուն կամ անհատի աշխատանքի հետ, կամ անհատի հոգեկան գործունեության հետ, և կամ բացարձակ ոգու հետ: Այս բոլորը հասցնում են այն բանին, որ 19-րդ դարի վերջում բուրժուական լեզվաբանները հրաժարվում են այդ հարցի քննությունից, և որպէս թէ ամենեին այնմ խընդրոյ չիք սպառուած», ինչպես կասեր Եղնիկը:

Մեր ժամանակներում բուրժուական գիտնականներից ոմանք նորանոր փորձել են կատարում լեզվի ծագումը լուսաբանելու ուղղությամբ: Այսպես՝ անգլիացի Ռ. Պեջետը հաստատում է, որ մարդիկ նախապես խոսել են ժեստերով ու ձեռքի շարժումներով: Հոլանդացի Վան-Գիննեկենը գտնում է, որ սկզբից մարդիկ խոսել են ձեռքի շարժումներով, զուգակցելով դրանց նաև որոշ հընչյուններ: Նախնական լեզուն ունեցել է միայն բարդ բաղաձայն հնչյուններ. ձայնավորներն առաջացել են ավելի ուշ: Այս երկու գիտուններն էլ, ճիշտ կերպով շեշտելով ձեռք-լեզվի դերը, սխալվում են, երբ ձեռքի, իբրև աշխատանքի գործիքի, դերը վերագրում են ավելի ուշ ժամանակներին: Համենայն դեպս, երկու գիտուններն էլ, առավելապես Վան-Գիննեկենը, հայտնապես մեծ ազդեցություն են կրել սովետական լեզվաբան Մառի ուսմունքից, և այդ անշուշտ նպաստավոր դեր է խաղացել այս հարցի լուսաբանման մեջ:

Ամերիկյան գիտնական Տորնդայկը գտնում է, որ մարդու նախահայրերն սկզբից եեթ ունեցել են ոչ կամային թոթովանքներ, այդ թոթովանքները բնազդաբար զուգակցվել են մեր նախահայրերի զգացումների ու ապրումների բնազդական արտահայտություններին, նույնիսկ այն վաղնջական ժամանակներում, երբ նախամարդը գտնվել է դեռևս բնական պայմաններում: Նախնական այդ թոթովանքները հետագայում առանձին նախամարդկանց կողմից հատկացվել են առարկաների կամ գործողությունների հասկացություններին, որով և առաջացել են բառերը: Այնուհետև այդ բառերը յուրացվել են այդ մարդկանց ընկեր-



ների կողմից և այսպիսով դարձել ամբողջ հորդայի սեփականու-  
թյունը: Տորնդայի այս տեսութայունը հետաքրքրական է նրանով,  
որ նշում է նախամարդու բնագրական թոթովանքների դերը  
լեզվաստեղծական պրոցեսում: Սակայն նա հիմնովին սխալվում  
է, երբ այդ թոթովանքների բառացումը վերագրում է դեռևս  
առանձին, իրարից անջատ ապրող մարդկանց:

Այսպիսով, բուրժուական լեզվաբանութայունը որքան էլ  
փորձում է նորանոր մեկնութայուններով լուսաբանել լեզվի ծագ-  
ման հարցը, այնուամենայնիվ չի կարողանում ազատվել բուր-  
ժուական գիտութայան սահմանափակվածութայունից և, հետևաբար,  
չի կարողանում լուծել այդ հարցն ըստ էութայան:

Առանձին ճիշտ դատողութայունները մնում են իբրև արժե-  
քավոր ու հետաքրքրական գիտողութայուններ և չեն գտնում  
իրենց ամբողջական ու հետևողական դարգացումը. լեզվի ծագ-  
ման ուսմունքները բուրժուական գիտնականների մոտ վերջին  
հաշվով հանգում են իդեալիզմին: Դեռ ավելին, կուտակած լեզ-  
վական փաստերը ժամանակակից ռեակցիոն բուրժուական լեզ-  
վաբանութայունը մեկնաբանում է հակադիտական սկզբունքներով՝  
ծառայեցնելով ռասայական փտած «տեսութայան»: Այսպիսով ժա-  
մանակակից բուրժուական լեզվաբանութայունը հանդես է գալիս  
իմպերիալիզմի ռեակցիոն քաղաքականութայունը արդարացնողի և  
«գիտականորեն» հիմնավորողի դերում. մինչդեռ այդ «գիտա-  
կան հիմնավորումը» իրականում ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվա-  
բանութայան ճշգրիտ սկզբունքների ֆալսիֆիկացիա: Լեզվի ծագ-  
ման և դարգացման ճշգրիտ տեսութայան հիմնական սկզբունքնե-  
րը տվել են մարքսիզմի կլասիկները, իսկ այդ հիմունքների վրա  
էլ սովետական մեծ լեզվաբան Մաուր ստեղծել է «Լեզվի նոր ուս-  
մունքը»: Մարքսիզմի կլասիկներից լեզվի ծագման հարցով ա-  
ռանձնապես զբաղվել է Ֆրիդրիխ Էնգելսը յուր՝ «Աշխատանքի  
դերը կապի մարդացման մեջ» բրոշյուրում: Խոսելով ուղեղի և  
գրա հետ՝ մտածողութայան ու լեզվի դարգացման մասին՝ Էնգել-  
սը ցույց է տալիս, որ մտածողութայունն ու լեզուն իրենց ծագ-  
մամբ ու դարգացմամբ պայմանավորված են մարդու հասարա-  
կական կյանքով ու հասարակական աշխատանքով. «Մեր կապիկ  
նախահայրերը եղել են հասարակական կենդանիներ: Ակներևա-  
բար անհնար է, որ մարդը, բոլոր կենդանիների մեջ ամենահա-



ստրակականը, առաջանալով ոչ հասարակական մերձավոր նախա-  
հայրերից: Ձեռքի դարգացմամբ, աշխատանքով սկսվող տիրա-  
պետութիւնը բնութիւն վրա յուրաքանչյուր քայլափոխում  
ընդարձակեց մարդու հայեցադաշտը: Բնութիւն իրերի մեջ նա-  
շարունակաբար հայտարարեց նոր, մինչ այդ անծանոթ հատ-  
կութիւններ: Մյուս կողմից աշխատանքի դարգացումն անհրա-  
ժեշտաբար նախաստեց հասարակութիւն անդամներին ավելի սեր-  
տորեն կապվելու իրար հետ, որով հաճախակի դարձան փոխա-  
դարձ աջակցութիւն, համագործակցութիւն գեպքերը, և այս  
համագործակցութիւն օգտակարութիւն գիտակցութիւնը յուրա-  
քանչյուրի համար պարզ դարձավ: Կարճ ատաժ՝ դարգացման են-  
թակա մարդիկ հասան այն կետին, որ կարիք գգացին մի բան  
ասելու իրար, պահանջն ստեղծեց իր օրգանը. — կապի անդար-  
գացած խոչափողը դանդաղ, սակայն հաստատուն կերպով փո-  
խարկվեց միշտ աճող մոդուլացիայի շնորհիվ, և բերանի օրգան-  
ները հետզհետե վարժվեցին վանկատվող հնչյուններն իրար  
ետեից արտաբերել: ...Աշխատանքի հետ ու աշխատանքի միջո-  
ցով լեզվի ծագման այս մեկնաբանութիւնը միակ հշմա-  
րիտն է...»<sup>1</sup>:

Էնգելսի այս խոսքերը լույս են սփռում լեզվի ծագման  
պրոցեսի վրա: Այդ մեկնաբանութեամբ լեզուն օրինաչափորեն  
առաջացել է մարդկային հասարակութիւն կազմավորման հետ,  
որպես հասարակական աշխատանքի արդյունք և որպես հա-  
սարակութիւն անդամների իրար հետ հաղորդակից լինելու  
միջոց, որպես հասարակական հաղորդակցման միջոց: Այս-  
պիսով, հակառակ բուրժուական մտածողներին, որոնք «աշ-  
խատանքային» տեսութիւն մեջ անգամ մարդուն դիտում են  
հասարակութիւնից անկախ, Էնգելսը ցույց է տալիս, որ ոչ  
միայն լեզուն ու մտածողութիւնը, այլև լեզու ունենալու, իրար  
մի բան ասելու անհրաժեշտութիւնն արդյունք է մարդկանց հա-  
սարակական կյանքի և հասարակական աշխատանքի: Այնուհետե  
մարքսիստական այդ մեկնաբանութիւնը ցույց է տալիս, թե  
որքան սխալ են բուրժուական այն մտածողները, որոնք լե-  
զուն ու մտածողութիւնը դիտում են իբրև անհատի հոգեկան

<sup>1</sup> Յ. Էնգելս, «Աշխատանքի դերը կապի մարգացման մեջ», Երևան,  
1930, էջ 8:



գործունեության կամ ինչ-որ բացարձակ ոգու գործունեության արդյունք: Մարքսիստական այդ բացատրությունը ցույց է տալիս պարզորեն, որ լեզուն և մտածողությունը հասարակության վերնաշենքային երևույթներ են և իրենց ծագմամբ ու զարգացմամբ պայմանավորված են հասարակական կեցությամբ:

Վերջապես այդ մեկնաբանությունը ցույց է տալիս, որ լեզվի ծագումը համընկնում է կապի մարդացման պրոցեսին, այսինքն՝ մարդկային հասարակության կազմավորման շրջանին. «Լեզուն նույնքան հին է, որքան և գիտակցությունը. լեզուն հանդիսանում է առարկայական, ուրիշ մարդկանց համար էլ գոյություն ունեցող և միայն դրա շնորհիվ ինձ համար ևս գոյություն ունեցող, իսկական գիտակցությամբ, և, ինչպես գիտակցությունը, լեզուն ևս առաջ է գալիս ուրիշ մարդկանց հետ հաղորդակցելու անհրաժեշտությունից»<sup>1</sup>: Այս ցույց է տալիս նաև, որ լեզվի ծագման պրոցեսը միասնական է, անկախ այն բանից, թե նախապես նա մի տեղ է առաջացել, թե բաղմամբիվ տեղերում:

Մառի ուսմունքը կիցնտիկ լեզվի մասին. — Այժմ էլ, նույնիսկ սովորական խոսակցությունների ժամանակ, մարդիկ իրենց հազորդածն ավելի տպավորիչ և արտահայտիչ դարձնելու համար հաճախ դիմում են այլևայլ միջոցների, հատկապես դեմքի արտահայտության, գլխի ու ձեռքերի զանազան շարժումների: Այդ միջոցներն, իհարկե, մեզ համար միայն կողմնակի, երկրորդական նշանակություն ունեն: Բայց լեզվի առաջացման ու զարգացման նախնական շրջանում այդ միջոցները մարդկանց հաղորդակցման մեջ հիմնական, առաջնակարգ դեր են խաղացել: Ուսումնասիրելով Ավստրալիայի, Աֆրիկայի և Ամերիկայի բնիկների լեզուները, որոնք զարգացման ավելի ցածր աստիճանի վրա են գտնվում, լեզվաբանները հաստատել են, որ այդ լեզուներում չափազանց մեծ դեր են կատարում դեմքի զանազան արտահայտությունները, ձեռքի, գլխի ու մարմնի այլ մասերի շարժումները, չնայած որ այդ լեզուները, այնուամենայնիվ, բավական զարգացած վիճակի են հասել արդեն: Այդ միջոցները, որոնք ընդհանուր առումով կոչվում են ձեռք լեզու, գծային լեզու կամ Մառի անվանումով՝ կիցնտիկ լեզու, ժամանակակից ամենացածր աստիճանի

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 21—22.



Վրա գտնվող հնչյունական լեզուներին էլ ուղեկցում են իբրև վե-  
 րապրուկներ նախնական համամարդկային հաղորդակցման հա-  
 մակարգի: Սակայն մարդու լեզվաստեղծական պրոցեսի նախնա-  
 կան շրջանում այդ կինետիկ լեզուն եղել է գերիշխողը: Սովե-  
 տական մեծ գիտնական Ն. Յա. Մառը՝ հիմնելով յուր ուսմունքը  
 կինետիկ լեզվի մասին՝ ապացուցել է, որ կինետիկ լեզվի առա-  
 ջացումն ու գոյությունը պայմանավորված էր հենց նախամար-  
 դու աշխատանքի բնույթով: Նախամարդու աշխատանքի բնա-  
 տուր գործիքը՝ ձեռքը, հանդես է գալիս նաև որպես հաղորդակ-  
 ցելու միջոց: Յուր այս ուսմունքով Մառը ձեռք լեզվի մասին  
 եղած նախորդ դրույթները՝ արտահայտված տարբեր լեզվաբան-  
 ների կողմից, լուսաբանեց նոր տեսանկյունով, բացատրեց այդ  
 երևույթը մատերիալիստորեն և բարձրացրեց այն մի նոր, ինք-  
 նուրոշյն ուսմունքի աստիճանին: Պատմական տեսակետից կի-  
 նետիկ լեզուն նախորդել է հնչյունական լեզվին: Հասարակա-  
 կան մարդը հաղորդակցել է յուր նմանների հետ ձեռքերի, դեմ-  
 քի ու մարմնի զանազան մասերի շարժումներով, զուգակցելով  
 դրան անշուշտ նաև իր ունեցած ճիշերն ու բացագանչություն-  
 ները: Հաղորդակցման համար կատարվող շարժումները չեն եղել  
 բնաղդական, ոչ կամային ռեֆլեքսներ, այլ հանդիսացել են գի-  
 տակցական, որոշ իմաստ ունեցող արտահայտչական միջոցներ:  
 Հետաքրքիր է հիշել, որ Ամերիկայի հնդիկների տարբեր ցեղե-  
 րը միմյանց հետ խոսելու համար դեռ այժմ էլ օգտագործում են  
 կինետիկ լեզուն, որ այս դեպքում հանդես է գալիս իբրև միջ-  
 ցեղային հաղորդակցման միջոց: Այս բոլորը ցույց են տալիս,  
 որ լեզվի ստեղծման նախնական շրջանում գերիշխում է կինե-  
 տիկ լեզուն:

Այդ չի նշանակում, իհարկե, թե այդ շրջանում մարդիկ  
 բոլորովին զուրկ էին հնչյունական լեզվից: Ոչ, դեռևս կենդա-  
 նական վիճակից ժառանգած զանազան ճիշերը, որ բնականա-  
 բար արդեն որոշ զարգացում ունեցել էին, անպայմանորեն օգ-  
 տագործվում էին կինետիկ լեզվին զուգընթաց: Բայց նախնա-  
 կան շրջանում դրանց դերը համեմատաբար երկրորդական էր.  
 նրանք ծառայում էին իբրև օժանդակ, լրացուցիչ միջոցներ կի-  
 նետիկ լեզվի նկատմամբ, ճիշտ այնպես, ինչպես ժամանակակից  
 լեզուներում երկրորդական դեր են կատարում կինետիկ լեզվի



վերապրուկները: Միայն հասարակության և հասարակական գի-  
տակցության ու լեզվի զարգացման ավելի ուշ շրջանում հըն-  
չյունական այդ նախնական լեզվական տարրերի բազմացմամբ,  
տարրերակմամբ, և աստիճանաբար ձեռք բերած գերակշռությամբ  
է, որ հնչյունային լեզուն հանդես է գալիս իբրև հասարակական  
հաղորդակցման հիմնական, գերակշռող միջոց, որ և հետագայում  
դառնում է գրեթե բացարձակապես միակը:

Հնչյունակալ լեզվի առաջացումը. — Բայց ի՞նչպես է առաջա-  
ցել հենց այդ հնչյունական լեզուն: Այս հարցի լուսաբանման  
համար մեզ անհրաժեշտ է մի թեթևակի ակնարկ ձգել այսպես  
կոչված կենդանիների «լեզվի» վրա: Նախապես անհրաժեշտ ենք  
համարում ասել, որ կենդանիների և ոչ մի տեսակը, նույնիսկ  
զարգացման ամենաբարձր աստիճանին հասած մարդանման կա-  
պիկները, չունեն լեզու այն իմաստով, ինչպիսին է մարդկային  
լեզուն: Կենդանական բնազդական ճիչերն ու ձայները, որոնք  
հաճախ կարող են տարբերվել իրարից ըստ պայմանների և ըստ  
այն զգացումների, որոնց ոչ կամային արտահայտությունն են  
դրանք, երբեմն ընկալվում են նույն ցեղի կենդանիների կողմից  
և նրանց մեջ առաջ բերում համապատասխան բնազդը: Այսպես  
օրինակ՝ շների տարբեր տեսակի հաջոցները տարբեր հանգու-  
մանքներում ու տարբեր բնազդների շնորհիվ, տարբեր էլ զգա-  
ցումներ են առաջ բերում ցեղակիցների մեջ: Բացի այդ, կան  
կենդանիներ, որոնք նույնիսկ մարդկային հնչյուններն ու բա-  
ռերը կարող են սովորել ու վերարտադրել. այդպիսին է, օրի-  
նակ, թուրակը: Բայց չնայած դրան, այդ բոլոր դեպքերում էլ  
կենդանիների «լեզվի» ու մարդկային լեզվի միջև նմանություն-  
նք միայն արտաքին է. էպես նրանք որակական, սկզբուն-  
քային տարբերություններ ունեն, և ոչ մի դեպքում կենդանի-  
ների «լեզուն» չի կարելի լեզու համարել այդ բառի իսկական  
իմաստով: Կենդանական ճիչը, որքան էլ նա բազմազան լինի,  
այնուամենայնիվ ներկայացնում է հոգեկան որևէ վիճակի կամ  
զգացման բնազդական-ձայնական արտահայտությունը. նա ոչ  
կամ այն բնազդի ոչ կամային արտահայտություններից մեկն է,  
և այն էլ՝ անմիջական արտահայտություններից մեկը, նա տար-  
բերված, դիտակցված չէ, որպես առանձին բառ հասկացություն:  
Մեզ վերաբերում է թուրակին, օրը կարող է վերարտադրել մարդ-



կային լեզվի հնչյուններն ու բառերը, ապա այս դեպքում էլ  
 նրա կատարածը ավելի մեխանիկական-նմանողական երևույթ է  
 և ոչ գիտակցական. որքան էլ թուփակը «ընդունակ» լինի,  
 այնուամենայնիվ իր իսկ արտասանածը որոշակիորեն չի ըմբռ-  
 նում և, որ ավելի կարևորն է, նա միայն վերարտադրում է իր  
 սովորածը, իսկ դրա հիման վրա նորանոր խոսքեր կազմել ու  
 «խոսել», ինչպես գիտենք, նա չի կարողանում: Վերջապես,  
 կենդանիների «լեզուն» զուրկ է հասարակական ֆունկցիայից,  
 նա չունի և չի կարող ունենալ հասարակական ֆունկցիա հենց  
 այն պատճառով, որ կենդանիները, նույնիսկ այսպես կոչված  
 «հասարակություններով» ապրող կենդանիները, զուրկ են այն-  
 պիսի հասարակությունից, ինչպիսին ունի մարդկությունը:  
 Մարդկային հասարակությունը գիտակցված աշխատանք կատա-  
 րող, արտադրության միջոցներ արտադրող կենդանիների՝ մարդ-  
 կանց արտադրական հարաբերությունների վրա հիմնված հա-  
 սարակություն է. իսկ կենդանիներն այդպիսի հասարակություն  
 չունեն: Կենդանիների մոտ ինչպես այդ ճիշերը, այնպես էլ ուրիշ  
 բնագոյները բազմաթիվ կրկնությունների շնորհիվ վերածվում  
 են որոշ պատկերացումների, բայց երբեք էլ գիտակցված կատե-  
 զորիաներ չեն դառնում: Սակայն, ինչ էլ որ լինի, տվյալ դեպ-  
 քում կենդանիների, առանձնապես կապիկների, «լեզվի» ուսում-  
 նասիրությունն այն արժեքն ունի, որ նա ցույց է տալիս, թե  
 որոնք են նախամարդու ունեցած բնական-ֆիզիոլոգիական այն  
 ունակությունները, որոնց հետագա զարգացմամբ հասարակա-  
 կան մարդն ստեղծեց հնչյունական լեզուն: Մի շարք գիտուննե-  
 րի ուսումնասիրությունները կապիկների լեզվի մասին ցույց են  
 տվել, որ կապիկները, հատկապես շիմպանզեն, ունեն բավակա-  
 նաչափ տարբերակված ճիշեր, որոնք ընկալվում են ցեղակից-  
 ների կողմից հավասարապես և առաջացնում նրանց մեջ նույն-  
 պիսի զգացումներ: Ամերիկացի Բլանշ Լիրենզը կազմել է շիմ-  
 պանզեի արձակած ճիշերի ցանկը: Այդ ցանկը բաղկացած է  
 երեքհարյուր ճիշերի գրանցումներից, որոնք բաժանվում են  
 32 խմբի կամ տեսակի. յուրաքանչյուր խմբի մեջ մտնում են  
 միևնույն բնագոյի կամ զգացման հետ արձակված տարբեր ճի-  
 շերը: Օրինակ՝ ուտելու ժամանակ շիմպանզեն արձակում է գակ,  
 գախկ, գախ, կխա, նգակ, նգխակ, նկակ ճիշերը, բարեկամներին



ողջունելիս արձակում է գլխ ճիշը՝ արագ կրկնություններով,  
 տազնապի ժամանակ արձակում է խոռոխ ճիշը՝ երկարացնելով  
 ձայնավորն առաջին ճիշում, ցավի ժամանակ (երբ նրան կծում  
 է մեկ ուրիշ կապիկ) արձակում է եյ (յի) ճիշը և այլն և այլն:  
 Դարվինը ցույց է տվել, որ կապիկները նույնպես ունեն գեմքի  
 այնպիսի արտահայտություններ (միմիկաներ), ինչպիսիք ունեն  
 մարդիկ, և որ գեմքի այդ արտահայտությունները կապիկի մոտ  
 էլ արդյունք են այս կամ այն հոգեկան վիճակի: Ամերիկյան  
 գիտնական Գարները, որ ուսումնասիրել է կապիկների զանա-  
 զան ցեղերը Միացյալ Նահանգների զազանանոցներում, ապա  
 և՛ Աֆրիկայի անտառներում, հայտնում է, թե «կարելի է ըն-  
 դունել իբրև կանոն, որ կապիկ յուրաքանչյուր շարժումը դու-  
 գակցվում է որոշ ձայնով, և յուրաքանչյուր ձայն (ճիշ)՝ որոշ  
 շարժումով, որը նույն ցեղի մի ուրիշ կապիկի մոտ էլ միշտ նշա-  
 նակում է մի ինչ որ որոշյալ բան»:<sup>1</sup> Դեռ ավելին, նույն հե-  
 ղինակը գտնում է, որ իր ուսումնասիրած կապիկների լեզուն  
 առավելապես հնչյունային է, քան կինետիկ, և դրանից էլ եզ-  
 րակացնում է, թե կապիկները «լիովին ի վիճակի են կառավար-  
 վել ավելի շուտ միայն հնչյուններով, քան միայն նշաններով»:<sup>2</sup>  
 Այս բոլորը ցույց են տալիս, որ կապիկների մոտ մենք արդեն  
 գտնում ենք հնչյունական լեզվի նախնական, բնական տարրերը,  
 այն նախադրյալները, որոնց հետագա զարգացմամբ հասարա-  
 կական մարդն աշխատանքի պրոցեսում ստեղծեց յուր լեզուն:  
 Սակայն, այդ նախադրյալների գոյությունը կապիկների մոտ  
 ընդունելով հանգերձ, պետք է նշել, որ կապիկների լեզուն որա-  
 կապես տարրեր է մարդկային լեզվից, ավելի ճիշտ՝ կապիկները  
 զուրկ են այնպիսի լեզվից, ինչպիսին գտնում ենք մարդու մոտ:  
 Նույն Գարները, իբրև եզրակացություն յուր ուսումնասիրու-  
 թյունների, ասում է. «...կապիկներն ընդհանրապես կապակց-  
 ված խոսակցություն չունեն: Նրանց խոսքը սովորաբար սահմա-  
 նափակվում է առանձին հնչյուններով կամ ճիշերով, որոնք  
 կրկնվում են միևնույն ձևով: Ենթադրել, թե նրանց խոսակ-  
 ցությունները մշակված են և ունեն բարձր հասարակական

<sup>1</sup> Гарнер, Речь обезьян, 1892. стр. 69—70.

<sup>2</sup> Гарнер, Անդ, էջ 70.



բնույթ, նշանակում է հաստատել անհեթեթ մի բան<sup>1</sup>։ Կապիկներին այդ բոլոր լեզվական ունակությունները կրում են բնական, ոչ գիտակցված բնույթ։ Ճիշտ այդպես էլ կապիկները նույնպես կատարում են որոշ կարգի գործողություններ և նույնիսկ օգտագործում են իրենց ձեռքն ընկած քարերը, ճյուղերը, պտուղները և այլ առարկաներ այս կամ այն գործողության համար. օրինակ՝ քարը՝ ընկույզ ջարդելու համար, կամ ինչպես Աֆրիկայի կապիկները՝ հսկայական քարերն օգտագործում են լիռնան բարձունքից թշնամիներին վրա գլորելու համար։ Բայց կապիկ այդ գործողությունները որակապես տարբեր են մարդկային աշխատանքից։ Կապիկներին հատուկ չէ աշխատանքը, քանի որ նրանք չեն պատրաստում գործիքներ։ Հենց աշխատանքի բացակայությամբ էլ պայմանավորված է այն, որ կապիկները զուրկ են հասարակությունից. մարդկային ամենանախնական հորդաներն, իբրև հասարակություն, աշխատանքի շնորհիվ մի աստիճան արդեն բարձր են կանգնած կապիկների խմբերից։ Այս բոլորից հեշտ է եզրակացնել, թե ինչու կապիկները զուրկ են և գիտակցությունից, և լեզվից։ Մարդկային լեզվի տարբերին նմանող այն ճիշերը, որ գտնում ենք կապիկների մոտ, միայն նրանց ֆիզիոլոգիական ունակությունների, բնականաբար, մյուս բոլոր կենդանիների համեմատությամբ առավել զարգացած ունակությունների, բնազդական, ոչ կամային դրսևորումներն են։

Չարլզ Դարվինն իր ժամանակին ապացուցել է արդեն, որ մարդն առաջացել է բարձր զարգացման հասած մարդանման կապիկներից։ Ֆրիդրիխ Էնգելսն իր «Աշխատանքի դերը կապիկ մարդացման մեջ» բրոշյուրում քննության առնելով այդ հարցը՝ գտնում է, որ մարդու նախահայրերն արդեն իսկ կապիկներից մի աստիճան բարձր են եղել. «Մեր նախնիքները, որոնք կապիկից մարդ դառնալիս հազարամյակների ընթացքում հետզհետե իրենց ձեռքերը հարմարեցրել են որոշ գործողությունների... շատ ավելի բարձր են, քան այն միջանցիկ էակները... Ակներևաբար անհնար է, որ մարդը, բոլոր կենդանիների մեջ ամենահասարակականը, առաջանար ոչ հասարակական մերձավոր

<sup>1</sup> Гарнер, Անդ, էջ 45—46։



նախահայրերից»<sup>1</sup> Էնդելօի այս խոսքերը հաստատվեցին ավելի  
 ուշ՝ Հարավային Աֆրիկայում հայտարարված մարդանման կա-  
 պիկներին՝ ավստրալոպիտեկների բրածո ոսկորների ուսումնա-  
 սիրությամբ։ Այդ ուսումնասիրությունները հաստատեցին, որ  
 ավստրալոպիտեկներն ապրելիս են եղել ոչ թե ծառերի վրա,  
 այլ քայլել են գետնի վրա՝ հավանաբար ուղիղ կեցվածքով,  
 որով և արել են «կապկից մարդուն անցնելու վճռական քայլը»<sup>2</sup>  
 Եթե այս այսպես է, եթե մարդ դարձող մեր նախահայրերը մի  
 աստիճան արդեն բարձր են կանգնած եղել կապիկներից, ապա  
 նրանց մոտ կարելի էր գտնել ոչ միայն ավելի ցածր աստիճանի  
 վրա գտնվող կապիկների այսպես կոչված լիզվական բնատուր  
 ունակությունները, այլև դրանից մի փոքր ավելին։ Մարդ դար-  
 ձող մեր նախնիներն ունեցել են ճիչերի ավելի հարուստ պաշար։  
 Ինչպես ասել ենք, աշխատանքի շնորհիվ է, որ մեր այդ նախ-  
 նիները մարդ են դարձել։ Բայց այդ նախնական մարդը միայ-  
 նակ շատ անդոր էր բնության դեմ, յուր գոյությունը պահպա-  
 նելու համար նա ստիպված էր ապրել յուր նմանների հետ, աշ-  
 խատել ու պաշտպանվել ամեն կարգի արհավիրքներից ու  
 վտանգներից յուր նմանների հետ։ Այդ համատեղ աշխատանքն  
 ու պաշտպանությունն ինքնին արդեն համախմբում են նախա-  
 մարդկանց, համախմբում են ավելի սերտ կերպով և մշտապես։

Այսպես կազմվում են նախամարդկային հորդանները, որոնք  
 հիմնված են համատեղ աշխատանքի վրա։ Բնական է, որ հենց  
 այդ համակեցության ու համատեղ աշխատանքի հետ էլ ծագում  
 է փոխադարձ հաղորդակցման պահանջը. «...Զարգացման ենթա-  
 կա մարդիկ հասան այն կետին, որ կարիք զգացին մի քան ասե-  
 լալ իրար։ Պահանջն ստեղծեց իր օրդանը.—կապկի անդարգա-  
 ցած խոչափողը դանդաղ, սակայն հաստատուն կերպով փոխարկ-  
 վեց միշտ աճող մոդուլացիայի շնորհիվ, և բերանի օրդանները  
 հետզհետե վարժվեցին վանկատվող հնչյուններն իրար ետևից  
 արտաբերել»<sup>3</sup> Այստեղ, անտարակույս, հարց է առաջանում, թե

<sup>1</sup> Ֆ. Էնդելս, Աշխատանքի դերը կապկի մարդացման մեջ, Երևան,  
 1983, էջ 6-7, 8.

<sup>2</sup> Ֆ. Էնդելս, Անդ, էջ 5.

<sup>3</sup> Ֆ. Էնդելս, Անդ, էջ 8.



մարդ դառնալու այդ պրոցեսում մարդու նախնիները պահեցին  
արդյոք և իրենց պրիմիտիվ հաղորդակցումների համար օգտա-  
գործեցին այն բնական ճիշերը, որ ժառանգել էին իրենց նա-  
խորդներից: Այն, պահեցին և օգտագործեցին, և ոչ միայն այդ-  
քան. նրանք դարձացրին այդ բնական ճիշերն ու մի նոր որակ  
գարձրին:

Մենք ասացինք, որ կապիկներն էլ որոշ գործողություն-  
ներ կատարում են բնական գործիքների միջոցով. հրաժարվեց  
արդյոք նախամարդն այդ բնական գործիքներից և այն գործո-  
ղություններից, որոնք կատարում էր նա մարդ դառնալուց  
առաջ. բնականաբար՝ ոչ: Բայց նա ոչ միայն չհրաժարվեց այդ  
գործողություններից ու բնական գործիքներից, այլև դարձաց-  
րեց դրանք. մարդ դառնալու պրոցեսում նա գիտակցեց այդ  
գործողությունները, այսինքն պատահական գործողություններ  
կատարելուց անցավ մարդկային աշխատանքին, նա գիտակցեց  
բնական գործիքների դերը և, որ գլխավորն է, սկսեց սխառա-  
տել իր պրիմիտիվ գործիքները: Նա չհրաժարվեց նաև իր կա-  
պիկ նախահայրերից ժառանգած հոտերից, այլ աշխատանքի պրո-  
ցեսում գիտակցելով դրանց անհրաժեշտությունը է՛լ ավելի դար-  
ձացրեց դրանք և ավելի սերտ ու մշտական համախմբումով  
ստեղծեց մարդկային հորդաները: Ճիշտ այդպես էլ նա չհրա-  
ժարվեց բնականից ստացած ճիշերից, այլ ավելի քան դարձաց-  
րեց նրանք: Այդ դարձացումն արտահայտվեց ոչ միայն այն  
բանում, որ նախամարդը քանակապես ավելի շատ ու բազմա-  
տեսակ ճիշեր ունեցավ, այլ և, առաջին հերթին, այն բանում,  
որ նա գիտակցեց այդ ճիշերը: Այն, ինչ որ կապիկների մոտ  
գտնում ենք իրեն այս կամ այն բնագծի ոչ կամային ձայնական  
արտահայտություն, մարդու մոտ դարձավ գիտակցված, փոխա-  
դարձ հաղորդակցմանը ծառայող լեզվական տարր: Նշանակում  
է, մարդ դարձող մեր նախահայրերի առաջին ու խոշորագույն  
քայլը լեզվի ստեղծման պրոցեսում բնականից ժառանգած ճի-  
շերի գիտակցումն է: Բայց այս յուր հերթին նշանակում է նաև,  
որ այդ քայլն ինքնին ենթադրում է գիտակցության դարձա-  
ցումը մարդու մոտ: Անշուշտ գիտակցությունն ու լեզուն ծա-  
գում և դարձանում են միասնաբար, և այս այլևս նորություն  
չէ. մարքսիզմի կլասիկները վաղուց արդեն ապացուցել են այդ:



Մյուս կողմից, քանի որ նախամարդու մոտ աշխատանքը հասարակական բնույթ ունի, ապա հասարակական բնույթ ունենալու նաև նրա գիտակցությունն ու գիտակցված ճիշտը: Վերջապես, այդ բնական ճիշտի հասարակայնորեն գիտակցումը, նրանք իբրև հասարակական հաղորդակցման միջոցներ օգտագործելը նշանակում է նաև, որ այդ ճիշտն անջատվում են արդեն դրանք առաջացնող բնագոյներից: Կապիկների, ինչպես և բոլոր կենդանիների մոտ բնական ճիշտը նրանց բնագոյների անմիջական ձայնական արտահայտությունն են հանդիսանում: Կապիկը չի կարող արձակել այս կամ այն ճիշտ, եթե չունի այդ ճիշտ առաջացնող բնագոյը: Ժինչդեն նախամարդը, որ գիտակցում է թե՛ տվյալ բնագոյը, և թե՛ դրա առաջացրած բնական ճիշտ, անշուշտ կարողանում է նաև անջատել դրանք իրարից: Երբ նա գիտակցում է յուր այս կամ այն բնագոյը, վերջինս արդեն նրա համար դառնում է գիտակցված մի երևույթ և դադարում է բնագոյ լինելուց: Ծիշտ այդպես էլ, երբ նա գիտակցում է երբեմնի բնագոյի, այժմ արդեն գիտակցված երևույթի բնատուր ձայնական ճիշտ, վերջինս չի մնում այլևս որպես բնագոյական ճիշտ, այլ դառնում է տվյալ երևույթի գիտակցված անվանումը: Այսպիսով նախամարդը գիտակցում է այդ նախնական ճիշտն իբրև անվանումներ և պահում է իր գիտակցության մեջ. այժմ արդեն այդ երբեմնի ոչ կամային ճիշտը նա կարող է արձակել ոչ միայն այն ժամանակ, երբ տեսնում է դրանք առաջացնող երևույթները կամ գտնվում դրանք առաջացնող հոգեվիճակների մեջ, այլ և այն ժամանակ, երբ այդ երևույթները կամ հոգեվիճակներն առկա չեն: Այստեղից հետևում է, վերջապես, որ նախամարդն արդեն կարող է խոսել ոչ միայն այն երևույթների կամ հոգեվիճակների մասին, որոնք առկա են, կարող է հաղորդել իր ընկերներին ոչ միայն այն ապրումները, որ տվյալ հաղորդակցման միջոցին զգում է, այլ և այն, ինչ որ զգացել է նախկինում կամ կցանկանալ զգալ: Այս էլ բնականաբար հանգեցնում է այն բանին, որ նախամարդը կարողանում է ոչ միայն առանձին ճիշտը, այժմ արդեն գիտակցված անվանումները արձակել, այլև կապակցել զանազան ճիշտ անվանումները: Այսինքն՝ նա հասնում է այն բանին, որ կարողանում է վարել կապակցված խոսակցություն: Այսպիսով էլ, ահա, նա կատարում



12662  
299214  
14554

է վճռական քայլը լեզու ստեղծելու գործում՝ բնատուր ձայնա-  
կան ոչ կամային բնազդները վերածելով փոխադարձ հաղորդակցու-  
ման գիտակցված լեզվական միավորներին։ Սրանով նա ձեռք է  
բերում այն հիմնական առաջը, որից նա պետք է կառուցեր  
հետագայի զարգացած հնչյունական լեզվի շենքը։ Բնականաբար,  
այս չի նշանակում, թե հնչյունական լեզվի այդ նախնական  
տարրերը հաղորդակցման միակ միջոցն են հանդիսացել։ Ոչ,  
նախնական շրջանում դրանց հետ միասին մեծ դեր են խաղա-  
ցել մարմնի, հատկապես ձեռքի շարժումները և դեմքի դանադան  
արտահայտությունները։ Դեռ ավելին, սկզբում դրանք, ինչպես  
ասել ենք, կատարել են երկրորդական, կինետիկ լեզվին ուղեկցող  
միջոցների դեր։ Բայց մի անգամ արդեն որ դրանք գիտակցվում  
են իբրև հաղորդակցելու, թեկուզ և երկրորդական, միջոց-  
ներ, նախամարդն աստիճանաբար զարգացնում ու հարստացնում  
է դրանք մինչև այն աստիճան, որ կինետիկ լեզուն ինքն է  
երկրորդական կարգն անցնում։ Այդ բանը կատարվում է ձեռքի  
աշխատանքի զարգացմանը զուգընթաց։ «Եթե ուղիղ քայլվածքը  
մեր թավամաղ նախնիքների մոտ սկզբում կանոն, իսկ ժամա-  
նակի ընթացքում անհրաժեշտություն պիտի դառնար, ապա դա  
կանխադրում է, որ ձեռքերն այդ միջոցին հետզհետե պիտի  
վարժվին այլ աշխատանքներ կատարելու։ ...Վճռական քայլն  
արված էր. — ձեռքն ադատված էր և կարող էր նորանոր հըմ-  
տություններ ձեռք բերել. իսկ այդպիսով ձեռք բերած ճկունու-  
թյունը ժառանգվեց սերնդից սերունդ և աճեց։ ...Մարդկային  
ձեռքի պատիճանական կատարելագործումը և, նրան համընթաց,  
ոտքի զարգացումն ուղղահայաց քայլվածքի համար՝ անտարա-  
կույս ունեցել է իր ազդեցությունն օրգանիզմի այլ մասերի  
վրա շնորհիվ ադերսակցության օրենքի։ ...Ձեռքի զարգացմամբ,  
աշխատանքով սկսվող տիրապետությունը բնության վրա յու-  
րաքանչյուր քայլափոխում ընդարձակեց մարդու հայեցողաշարը։<sup>1</sup>

Այսպիսով աշխատանքի զարգացումը և ձեռքի, որպես աշ-  
խատանքի գործիքի, կատարելագործումը երկու ուղղությամբ է  
ազդում լեզվի վրա։ Նախ՝ նրա ազդեցությամբ, աշխատանքի  
պրոցեսում զարգանում են նաև մարմնի մյուս օրգանները, հատ-

<sup>1</sup> Թ. Էնգելս, Անդ, էջ 6, 7, 8.





կապեն՝ ուղեղը, և շոշափելիքի, տեսողութեան, լսողութեան և հոտառութեան օրգանները: Դրանց հետ միասին զարգանում են անշուշտ նաև խոսելու օրգանները և այդպիսով մարդիկ հնարավորութեամբ են ստանում զարգացնելու իրենց հաղորդակցման հնչյունական միջոցները: Մյուս կողմից՝ ձեռքի զբաղվածութեանը նորանոր աշխատանքներով՝ անհրաժեշտութեամբ են ստեղծում այդ հնարավորութեանների լիակատար օգտագործման: Կինեմիկ լեզուն պետք է տեղի տար հնչյունական լեզվին այն պարզ պատճառով, որ չէր կարող բավարարել մարդկանց փոխադարձ հաղորդակցման զարգացող պահանջներին. այդ լեզվով մարդիկ հնարավորութեամբ չունեին խոսելու, երբ իրարից հեռու էին և չէին տեսնում իրար, դժվար էր խոսելը նաև մութ ժամանակ: Բայց կինեմիկ լեզվից հրաժարվելու անհրաժեշտութեանը է՛լ ավելի ուժեղ է գլուխը առաջին հերթին դարձյալ աշխատանքի պրոցեսում: Ժխտել չի կարելի, որ մարդիկ փոխադարձ հաղորդակցման պահանջն առավել շատ են զգացել աշխատանք կատարելիս: Իսկ եթե ձեռքով աշխատելու ժամանակ անհրաժեշտ էր մի բան հաղորդել մյուսներին, ապա նրանք կինեմիկ լեզվով հաղորդակցելու համար ստիպված պիտի լինեին ընդհատել իրենց աշխատանքը: Ուստի և աշխատանքի զարգացումն ինքնին հարկադրում է մարդուն ազատել ձեռքը հաղորդակցման առաջնակարգ միջոցի ֆունկցիայից և զարգացնել հնչյունային լեզվի բնականից ժառանգած, բայց արդեն դիտակցված և գործադրվող ատաղձը՝ օգտագործելով խոսելու օրգանների զարգացումը: Բնականաբար այս օգտագործումը, հնչյունական լեզվի հարստացումն ու զարգացումը փոխադարձաբար փոխադրում են խոսելու օրգանների վրա, նրանց զարգացման խթան հանդիսանալով: Այսպիսով՝ աշխատանքի ընթացքում և նրա շնորհիվ զարգանում են թե՛ խոսելու օրգանները, և թե՛ հնչյունային լեզուն, իսկ սրանք էլ փոխադարձաբար ազդելով իրար վրա, հնարավորութեամբ են տալիս մարդուն զարգացնելու և մշակելու յուր լեզուն՝ հասցնելով այնպիսի կատարելութեան, որ հնարավոր է դառնում հաղորդակցել միայն հնչյունային լեզվով:

Նախադասությունների առաջացումը. — Այժմ մեզ հետաքրքրում է այն հարցը, թե ինչպես մարդիկ՝ օգտագործելով իրենց



սկզբնական հնչյունային լեզվական ատաղձը՝ կարողացել են  
ստեղծել նախադասությունները, բառերն ու հնչյունները, Լեզ-  
վաբանության մեջ ընդունված է, որ նախնական շրջանում մի  
բառը եղել է միանգամայն մի նախադասություն. սկզբնական  
այն ճիշդ անվանումները, որ ունեցել է մարդը, չին եղել առան-  
ձին բառեր, նրանք արտահայտել են ոչ թե որևէ առարկայի կամ  
գործողության հասկացությունը, այլ մի ամբողջական միտք:  
Այս ճիշտ է, իհարկե՝ Սակայն, մեզ թվում է, որ բառ-նախա-  
դասությունը պետք է դիտել իբրև զարգացման երկրորդ, ավելի  
բարձր աստիճան: Նախնական, զարգացման առաջին աստիճանում  
եղել են ոչ թե բառ-նախադասությունները, այլ բառ-մտա-  
ծություններ:

Գիտակցության զարգացման նախնական աստիճանում մարդը  
չի կարողացել գիտակցել առանձին գործողությունները կամ երե-  
վույթներն անկախ այն գործողություններից ու երևույթներից,  
որոնք ուղեկցել են միմյանց: Նա գիտակցել է իրար հետ կապ-  
ված երևույթների ու գործողությունների ամբողջ բարդ կոմպ-  
լեքսը և դրան համապատասխան էլ մի ճիշդ բառով արտահայտել  
իր գիտակցության մեջ կազմած կոմպլեքս-մտածությունը: Սրան  
հաջորդում է զարգացման այն աստիճանը, երբ մարդը կարողա-  
նում է գիտակցել իրար հետ շաղկապված երևույթներն ու գոր-  
ծողություններն իրարից անկախ: Այս աստիճանում է, ահա, որ  
մի ամբողջ մտածություն արտահայտող բառը կամ ավելի ճիշտ  
հնչյունական կոմպլեքսը դառնում է մի նախադասություն: Այս-  
տեղ էլ բառ-նախադասության առաջացումը պայմանավորված է  
նրա գիտակցության զարգացման աստիճանով: Նա, ճիշտ է, կա-  
րողանում է անջատել իրար հետ շաղկապված գործողություններն  
ու երևույթները, կարողանում է գիտակցել դրանք իրարից ան-  
կախ, բայց գեոևս չի կարողանում անջատել, իրարից անկախ  
գիտակցել առարկան ու հատկանիշը: Այն միասնությամբ, որ  
գոյություն ունեն առարկան ու հատկանիշը օրեկտիվ իրականու-  
թյան մեջ, այդ միասնությամբ էլ գիտակցվում էին նրանք  
մարդու կողմից: Բնական է, որ այս աստիճանի վրա նախադա-  
սությունը պետք է արտահայտվեր մի բառով, որ իր մեջ միաց-  
նում էր թե՛ առարկան (ենթական), և թե՛ հատկանիշը (ստորո-  
գյալը):



Հասարակական կեցության հետագա զարգացման ու բար-  
 դացման զուգընթաց զարգանում է մարդու գիտակցությունը,  
 որ և արտահայտվում է լեզվի մեջ: Մարդը հասնում է այն աս-  
 տիճանին, որ կարողանում է իրականությունից վերանալ և իբ-  
 դեհալիս գիտակցության մեջ միմյանցից անջատել առարկան և հատկա-  
 նիշը, մասնավորապես՝ գործողը, գործողությունը և գործողու-  
 թյան կրողը (ուղիղ խնդիրը): Դրա հետևանքն է լինում նա-  
 խադասության հոգաբաշխումը. մի բառ-նախադասությունը  
 վերածվում է առանձին բառերի կապակցության: Բայց քանի  
 դեռ մարդը դիտում է իրեն իբրև բնության մի մասը, քանի  
 դեռ նա ակտիվորեն չի ներգործում բնության վրա և երևույթ-  
 ները դիտում է ոչ իրենց շարժման (դինամիկ), այլ կայուն  
 (ստատիկ) վիճակում, ուստի և նրա մոտ առարկան ու գործո-  
 ղությունը, և ենթական ու խնդիրը դեռևս սկզբունքորեն չեն  
 տարբերված, նրանք բոլորն էլ լեզվի մեջ հանդես են գալիս  
 իբրև անուն: Դրան համապատասխան էլ անվանական ու բայա-  
 կան նախադասությունների սահմանադատում չկա: Նախադա-  
 սությունը թեև հոգաբաշխված է, բայց նա հանդիսանում է վի-  
 ճակի, դրության, երևույթի անվանումը: Դրա վերապրուկները  
 կան բազմաթիվ լեզուներում. Օրինակ՝ օգուլերեն *asa-yuol-so-*  
*romoh* «մարդը տեսավ եղջերուին» բառացի նշանակում է. «մարդ-  
 -եղջերու-տեսողություն»:

Հոջորդ աստիճանում մարդը գիտակցում է մի կողմից գոր-  
 ծողի և գործողության փոխհարաբերությունը, որով նա գործո-  
 ղին դիտում է իբրև գործողության աղբյուր, մյուս կողմից՝  
 գործողի (օբեկտի) և խնդրի փոխհարաբերությունը, մեկին իբրև  
 ներգործող, մյուսին՝ կրող: Սրա հետևանքը լինում է այն, որ  
 տարբերակվում են գոյականն ու բայը՝ մի կողմից, և նախադա-  
 սության մեջ ենթական ու ստորոգյալը և ենթական ու խնդիրը՝  
 մյուս կողմից: Սրա հետ միասին առաջանում են նաև հոլովա-  
 լը, նախ և առաջ՝ գործողինն ու խնդրինը, ըստ որում գործողը  
 հաճախ ունենում է հատուկ հոլով (էրգատիվ): Այդ բանը կա-  
 տարվում է բայերի տարբեր սեռերի՝ անցողական և ոչ անցո-  
 ղական սեռերի առաջացմանը զուգընթաց:

Վերջապես, զարգացման ավելի բարձր աստիճանի վրա  
 հանդես է գալիս գործելու կամ ավելի ճիշտ՝ ներգործելու, որ-



պես առարկայի հիմնական ու մշտական հատկանիշի հասկացու-  
թյունը մարդու գիտակցութեան մեջ, և համապատասխանորեն  
նախադասութեանն էլ վերափոխվում է: Նախադասութեան մեջ գոր-  
ծողը (ենթական) դառնում է բոլոր հնարավոր ստորոգումների  
կենտրոնը. ձևական տեսակետից ուղղական հոլովը դառնում է  
ենթականի հոլով, նույնիսկ այն դեպքերում, երբ նախադասու-  
թեան քերականական ենթական իրականում գործողութեան  
կրողը, ուղիղ խնդիրն է (որդին սիրվում է հորից): Բնականա-  
բար դրան դուգակցվում է նաև կրավորական սեռի դարգա-  
ցումը:

Նույն նախապայմանների շնորհիվ պարզ նախադասու-  
թյուններից առաջանում ու զարգանում է բարդ նախադա-  
սությունը, որ հանդիսանում է հաղորդման ավելի բարդ եղա-  
նակը: Բարդ նախադասութեանն առաջանում է նախադասու-  
թեան երկրորդական անդամների ինքնուրույնացմամբ ու ստո-  
րոգման նոր միավոր դարձնելով, կամ հանդիսանում է համա-  
դասելու կամ ստորադասելու ուղղակի համադրութեան զարգա-  
ցումն ու արդյունքը: Վերջինս ստացվում է այն դեպքում, երբ  
երկու ամփոփ մտքերի (նախադասութեանների) անջատիչ սահ-  
մանը վերացնում ենք և երկու միավորներն ընդգրկում մեկի  
մեջ:

Բառի առաջացումը. — Նախադասութեան այս հոդաբաշխու-  
մը, որի շնորհիվ մի բառ-նախադասութեանը վերածվում է նա-  
խադասութեան բաղմամբի անդամներից կազմված մի միավորի,  
իր հետ առաջացնում է նաև անկախ բառերը: Եթե մարդը կա-  
րողանում է գիտակցել առարկան անկախ հատկանիշից, կամ հա-  
կառակը, ապա պարզ է, որ այդ առարկայի կամ հատկանիշի  
գիտակցումն արդեն պայմանավորում է համապատասխան բա-  
ռերի առաջացումը, կամ ավելի ճիշտ, նախկին բառ-նախադա-  
սութեանների վերածումն առանձին բառերի, նրանց ամբացումն  
այս կամ այն բառ-հասկացութեան: Այս շրջանում արդեն բառե-  
րը հանդես են գալիս իրրե օբեկտիվ իրականութեանը մեր գի-  
տակցութեան սեփականութեանը դարձնելու անկախ, ինքնու-  
րույն միավորներ: Նրանք, իրենց հնչյունական կազմով ու  
իմաստով, մեր գիտակցութեան մեջ հանդես են գալիս իրրե  
այդ օբեկտիվ իրականութեան առարկաների ու երևույթների



փոխարինողներ: Սակայն հենց բառի, իբրև առարկաների ու  
 երևույթների փոխարինողի ծագումը լուսարանելու համար մեզ  
 անհրաժեշտ է մի երկու խոսք ասել նաև բառի բովանդակու-  
 թյան մասին: Այն, ինչոր մեղանից անկախ և մեղանից դուրս  
 գոյություն ունի իբրև իր, առարկա, երևույթ և այլն, հանդես  
 է գալիս որպես մեր գիտակցության մեջ տվյալ իրին, առար-  
 կային կամ երևույթին փոխարինող բառի նյութական իմաստ:  
 Բայց այս նշանակում է արդյոք, որ բառիմաստը նույնություն  
 է կազմում այս կամ այն կոնկրետ առարկայի հետ: Բոլորովին  
 էլ ոչ: Տարակույս չկա, իհարկե, որ յուրաքանչյուր բառ, իբրև  
 որևէ իրի, առարկայի, երևույթի անուն, ինքնին նշում է ար-  
 դեն այս կամ այն իբր, առարկան, երևույթը և այլն: Բայց դա  
 բառիմաստի մի կողմն է միայն, դա բառի անվանողական դերն  
 է: Մինչդեռ բառիմաստն ավելի լայն հասկացողություն է և չի  
 սահմանափակվում այս կամ այն իրի, առարկայի նշումով: Ամե-  
 նից առաջ, յուրաքանչյուր բառ, հենց բառ դառնալու համար,  
 նախապես ենթադրում է որոշ ընդհանրացում ու վերացում: Այս-  
 պես, մենք ունենք սեղան, աթոռ առարկաներն իրենց բազմա-  
 թիվ տեսակներով ու ձևերով: Այս տեսակետից յուրաքանչյուրը  
 մի կոնկրետ առարկա է. մինչդեռ մեր գիտակցության մեջ սե-  
 դան, արոտ բառերը չեն նշում այդ կոնկրետ տեսակներից որևէ  
 մեկը, այլ տալիս են այդ բազմաթիվ առարկա-տեսակների ընդ-  
 հանուր հասկացությունը: Այդպես էլ կենդանի բույս, ֆար բա-  
 ռերը նշանակում են չափազանց բազմազան ու բազմաթիվ կեն-  
 դանիներ (գայլ, շուն, եղնիկ և այլն), բույսեր (ծառ, խոտ, թուփ  
 և այլն), քարեր (գրանիտ, տուֆ և այլն): Նշանակում է, այդ  
 ընդհանրացման ու վերացման շնորհիվ մարդը հասնում է այն-  
 պիսի մի աստիճանի, երբ բառիմաստն այլևս չի համընկնում  
 կոնկրետ առարկայի անվանումին: Դրան հակառակ, միևնույն  
 առարկան մենք կարող ենք արտահայտել տարբեր ձևերով ու  
 միջոցներով. ինչպես օրինակ՝ կրկան և Հայտնատանի մայրաքա-  
 ղաֆ ասելով մենք հավասարապես նկատի ունենք միևնույն քա-  
 ղաքը, այսինքն՝ նույն իմաստը, մինչդեռ արտահայտում ենք  
 տարբեր միջոցներով ու ձևերով: Վերջապես, որ բառիմաստն ու  
 բառ-անվանումը կարող են չհամընկնել իրար, շատ պարզ կերպով  
 երևում է դերանունների մեջ: Դերանուններն, ինչպես հայտնի



է, խոսքի մեջ հանդես են գալիս իբրեւ այլ և այլ բառերի փոխարինողներ: Նրանց այդ դերը հնարավոր է դառնում այն բանի շնորհիվ, որ նրանք, առանձին վերցրած, չունեն առարկայական վերաբերություն, այսինքն՝ խոսքից դուրս չեն կարող լինել այս կամ այն առարկայի անվանումը: Օրինակ՝ ես դեռանումն ունի իմաստ, և այդ իմաստն այն է, որ նա նշանակում է տվյալ մոմենտում խոսող անձ՝ իր իսկ՝ խոսողի համար: Հետևաբար, յուրաքանչյուր անձ կարող է ես կոչել իրեն, երբ խոսողության պրոցեսում նա ուղում է նշել ինքն-իրեն: Այդպես են նաև մյուս դերանունները: Այս բոլորից հետևում է այն, որ յուրաքանչյուր բառի բովանդակությունն ունի երկու կողմ՝ բառիմաստ և առարկայակոն վերաբերություն: Բառիմաստն այն ընդհանուր հասկացություներն է, որ հասարակական գիտակցմամբ ու արժեքավորմամբ պարունակում է բառը: Առարկայական վերաբերությունն այն կոնկրետ նշանակություներն է, որ ունի բառը տվյալ խոսքի մեջ, տվյալ գործածությամբ: Այստեղ, ինչպես տեսնում ենք, հանդես են գալիս իրենց անխզելի կապով, որպես հակադրությունների դիալեկտիկական միասնություն, բառիմաստը՝ իբրեւ ընդհանուր, և առարկայական հասկացումը՝ իբրեւ մասնավոր:

Վերն ասածներից հեշտ է եզրակացնել, որ բառիմաստը մեր գիտակցության մեջ հանդես է գալիս իբրեւ որեւէ առարկայի, երևույթի ընդհանուր հասկացություն և, հենց դրանով էլ, ինքնին ենթադրում է որոշ վերացում (աբստրակցիա)՝ կոնկրետից: Սակայն, դրան հակառակ, նույնիսկ ժամանակակից որոշ լեզվաբաններ էլ բառիմաստը դիտում են որպես առարկայի պատկերացում, որպես ուղղակի մտապատկեր: Այս տեսությունը, որ սկիզբն է առել անցյալ դարի կեսերից, հանգում է այն բանին, որ բառիմաստի ըմբռնումը խոսողների կողմից համարվում է հոգեբանական մի պրոցես: Այսպես, ըստ այդ տեսության, երբ խոսողը հաղորդում է որեւէ բառ, որեւէ առարկայի կամ երևույթի անուն, ապա նախ և առաջ ինքը խոսողն իր մեջ նկատի է ունենում իր նշած առարկայի կամ երևույթի պատկերացումը, նրա որոշակի մտապատկերը: Արտասանված հնչյունախմբի, այսինքն՝ բառի հնչյունակազմի միջոցով ունկնդրողի լսողական տպավորությունները նրա մեջ ևս զարթեցնում են այն նույն



առարկա-մտապատկերները, որ ունեն հաղորդողը, և այսպիսով  
 տեղի է ունենում հաղորդակցողների փոխադարձ ըմբռնումը:  
 Այս, իհարկե, ընդունելի չէ: Բավական է հիշել վերն ասած  
 հենց այն փաստը, որ բառիմաստը, որպես ընդհանուր հասկա-  
 ցություն, չի նշում որևէ կոնկրետ առարկա, այլ միայն այդ  
 առարկայի վերացական հասկացությունը: Երբ խոսողն արտա-  
 սանում է բույս բառը, նա ինքն էլ չունի որևէ կոնկրետ բույսի  
 պատկերացումը, նա ինքն էլ, նույնիսկ, չգիտե, թե խոսքը  
 կոնկրետ որ բույսի մասին է: Օրինակ՝ երբ ասում ենք բույսն  
 ամուսն է, մենք չգիտենք, թե կոնկրետ ինչ բույսի մասին ենք  
 խոսում, այսինքն՝ նկատի չենք ունենում որևէ ծառ, թուփ կամ  
 խոտ, այլ այդ բոլորը միասին վերցրած: Իսկ եթե մենք նկատի  
 չունենք որևէ կոնկրետ առարկա, ապա՝ շատ պարզ է, որ առար-  
 կայի մտապատկեր նույնպես ունենալ չենք կարող: Եթե մենք  
 արտասանում ենք տուն բառը, առանց նկատի ունենալու որևէ  
 կոնկրետ տուն, ապա՝ ինչպես կարող ենք տան մտապատկերն  
 ունենալ այդ բառն արտասանելիս: Հոգեբանական այն պրոցե-  
 ան, որի շնորհիվ մենք ստանում ենք այս կամ այն առարկայի  
 մտապատկերը, կապված է հենց այդ կոնկրետ առարկայի հետ,  
 մինչդեռ բառիմաստն, ինչպես ասել ենք, ենթադրում է վերա-  
 ցում հենց այդ կոնկրետ առարկաներից: Ուրեմն՝ բառիմաստի  
 ըմբռնումը չի կարելի համարել հոգեբանական պատկերացում-  
 ների արդյունք: Եթե մենք կարողանում ենք փոխադարձաբար  
 ըմբռնել իրար ու հասկանալ միմյանց հաղորդած բառերի  
 իմաստները, ապա՝ այդ միայն այն բանի շնորհիվ ենք կարո-  
 ղանում, որ մեզանից յուրաքանչյուրի գիտակցության մեջ  
 տվյալ հնչյունը կամ հնչյունախումբը հանդես է գալիս իբրև  
 այս կամ այն հասկացության նյութական ձև: Ուրիշից լսած  
 հնչյունական տպավորությունները մեր գիտակցության մեջ  
 առաջ են բերում այս կամ այն բառի հնչյունական մտապատ-  
 կերը, իսկ այդ էլ՝ այն հասկացությունը, որ կապված է հենց  
 այդ հնչյունական մտապատկերի հետ: Բայց ինչպե՞ս է, որ  
 մարդկանց գիտակցության մեջ կազմվում, գոյանում է տվյալ  
 հասկացությունը, որի շնորհիվ էլ մարդիկ կարողանում են փո-  
 խադարձաբար ըմբռնել իրար: Այդ պրոցեսի միանգամայն որո-  
 շակի պարզաբանությունը տալիս է Մարքսը՝ «Դիտողություն»



ներ Ադուֆ Վագների գրքի մասին» հոգովածի մեջ նա ասում է.  
 «Մարդը հարաբերության մեջ է գտնվում արտաքին աշխարհի առար-  
 կաների, իբրև յուր պահանջների բավարարման միջոցների, հետ...  
 ինչպես և ամեն մի կենդանի, նրանք սկսում են այն բանից,  
 որ ուտեն, խմեն և այլն, այսինքն ոչ թե «գտնվեն» ինչ-որ  
 հարաբերության մեջ, այլ ակտիվորեն գործեն, գործունեության  
 շնորհիվ տիրապետեն արտաքին աշխարհի հայտնի առարկաներին  
 և այդպիսով բավարարեն իրենց պահանջները (նրանք, հետևաբար,  
 սկսում են արտադրությունից)։ Այս պրոցեսի կրկնության  
 շնորհիվ այդ առարկաների՝ «մարդու պահանջները» բավարա-  
 րելու ունակությունը տպավորվում է նրանց ուղեղում, մար-  
 դիկ և զազանները սովորում են նաև «տեսականորեն» տար-  
 բերել իրենց պահանջները բավարարելուն ծառայող արտաքին  
 առարկաները մյուս բոլոր առարկաներից։ Հետագա զարգացման  
 որոշ մակարդակի վրա, այն բանից հետո, երբ բազմապատկվե-  
 ցին և ապա միաժամանակ ավելի զարգացան մարդկանց պա-  
 հանջների ու գործունեության տեսակները, որոնց օգնու-  
 թյամբ նրանք բավարարվում են, մարդիկ տալիս են առանձին  
 անուններ այդ առարկաների ամբողջ կարգերին, որ նրանք  
 փորձով արդեն տարբերում են մնացյալ արտաքին աշխարհից։

Այս անխուսափելիորեն վրա է հասնում, քանի որ նրանք  
 գտնվում են արտադրության պրոցեսում, այսինքն՝ այդ առար-  
 կաների յուրացման պրոցեսում, մշտապես աշխատանքային  
 կապի մեջ իրար հետ և այդ առարկաների հետ և շուտով սկսում  
 են նույնպես և կռիվ մղել ուրիշ մարդկանց հետ՝ այդ առարկա-  
 ների համար։ Բայց այդ բառային անվանումը պատկերացման  
 ձևով միայն արտահայտում է այն, ինչ որ կրկնվող գործունե-  
 ությունը վեր է ածել փորձի, այսինքն՝ այն, որ որոշ արտաքին  
 առարկաներ, որոշ հասարակական կապի մեջ ապրող մարդկանց  
 (սա լեզվի առկայությունից անհրաժեշտաբար բխող են-  
 թադրություն է) ծառայում են նրանց պահանջները բավարա-  
 րելու համար։ Մարդիկ տալիս են այդ առարկաներին առանձին  
 (տեսակի) անուն, որովհետև նրանք արդեն զիտեն այդ առար-  
 կաների ունակությունը՝ ծառայել նրանց պահանջների բավա-  
 րարմանը, որովհետև նրանք առավել կամ պակաս հաճախ կըր-  
 կընվող գործունեության օգնությամբ ձգտում են տիրապետել



նրանց և այդպիսով նաև պահել նրանք իրենց տիրապետության  
 տակ. նրանք, հնարավոր է, այդ առարկաներն անվանում են  
 «բարիքներ» կամ դարձյալ ուրիշ որևէ կերպ, որը նշանակում  
 է, որ նրանք պրակտիկ կերպով գործադրում են այդ առարկա-  
 ները, որ վերջիններս նրանց օգտակար են... Մարդիկ փաստո-  
 րեն սկսում են նրանից, որ իրենց են յուրացնում արտաքին  
 աշխարհի առարկաները, որպես միջոցներ՝ իրենց սեփական  
 պահանջները բավարարելու համար և այլն, և այլն. հետո  
 նրանք հասնում են այն բանին, որ և բառային կերպով նշա-  
 նակում են նրանք իբրև իրենց պահանջները բավարարելու մի-  
 ջոցներ, — որպիսին նրանք արդեն ծառայում են նրանց համար  
 պրակտիկ փորձում... մարդիկ ոչ միայն պրակտիկայում վերա-  
 բերվում են այդպիսի նման առարկաներին, որպես իրենց պա-  
 հանջների բավարարման միջոցների, այլ նաև պատկերացումների  
 մեջ և ապա, բառային արտահայտության մեջ նշում են նրանք  
 իբրև իրենց պահանջները «բավարարող առարկաներ...»<sup>1</sup> Այս հաս-  
 վածում Մարքսը միանգամայն պարզորեն լուսաբանում է առար-  
 կաների բառային անվանման ու բառիմաստի կազմավորման պրո-  
 ցեսը: Մարդը նախ և առաջ արտադրության մեջ հայտնի հարա-  
 բերությունների մեջ է մտնում արտաքին աշխարհի առարկաների  
 հետ, այդ հարաբերությունների շնորհիվ նա տարբերում է իր «պա-  
 հանջները բավարարելուն ծառայող» առարկաները մնացյալ առար-  
 կաներից և ապա անվանում է այդ առարկաները: Սակայն անվանե-  
 լով առարկաները, նա այդ անվանումների մեջ դնում է հենց այն  
 հարաբերությունը, որ կա իր և այս կամ այն առարկայի միջև:  
 Նույն տեղում Մարքսն ասում է. «Նրանք (մարդիկ է. Ա.) վե-  
 րադրում են առարկային օգտակարության բնույթը, որն իբրև  
 թե համուկ է իրեն իսկ՝ առարկային, թեև ոչխարին հազիվ թե  
 իբրև յուր «օգտակար» հատկություններից մեկը պատկերանար  
 այն, որ նա պիտանի է մարդուն որպես կեր»:<sup>2</sup> Նշանակում է,  
 տալով առարկաներին բառային անվանումներ, մենք այդ անվա-  
 նումների (հնչյունախմբի) մեջ առաջին հերթին դնում ենք հենց  
 այն հարաբերությունը, որ կա մեր և այդ առարկաների միջև:

<sup>1</sup> К. М а р к с и Ф. Э н г е л ь с, С о ч. т. XV, стр. 461—621

<sup>2</sup> Անդ, էջ 462:



Հետևաբար բառիմաստի կազմվելը հիմնված է մարդու պրակտիկ գործունեություն վրա և արտահայտում է այդ գործունեություն ընթացքում մարդու ունեցած հարաբերությունները մի կողմից ուրիշ մարդկանց, մյուս կողմից արտաքին աշխարհի առարկաների հետ:

Ի հարկե, գիտակցություն զարգացման նախնական շրջանում հասկացություն կազմավորման մեջ կարող են դեր կատարել նաև առարկայի ձևը, գույնը և այլ արտաքին հատկանիշներ, բայց դրանք երկրորդական նշանակություն ունեն: Իրանց նշանակությունն ավելի մեծ է ոչ թե հասկացությունների կազմավորման, այլ՝ քերականական կարգերի առաջացման մեջ: Արտաքին աշխարհի նկատմամբ ակտիվորեն գործելու պրոցեսում մարդիկ ճանաչում են արտաքին առարկաները նրա հետ ունեցած կրկնվող հարաբերությունների շնորհիվ և հենց այդ ճանաչմամբ էլ կազմում այդ առարկաների հասկացությունները իրենց գիտակցության մեջ: Այս բանը հեշտ է ցույց տալ ամենահասարակ օրինակներով. դեռ նոր խոսել սովորող երեխան նախապես չի տարբերում իրեն շրջապատողներին իբրև մայր, հայր, տատ և այլն: Բայց հենց այդ շրջապատողները շարունակ երեխայի մոտ կրկնում են այդ անունները և ցույց տալիս դրանց կրողներին: Աստիճանաբար այդ անընդհատ կրկնվող անվանումների ու ցուցադրումների շնորհիվ երեխան սովորում է այդ բառերը և հասկանում այն, այսինքն՝ ճանաչում այդ անունները կրողներին: Իսկ այդ ճանաչումը ոչ այլ ինչ է, եթե ոչ հասկացության գոյացումը գիտակցության մեջ: Մի ուրիշ օրինակ բերենք. ենթադրենք, թե երկու տարբեր ազգի ներկայացուցիչներ միմյանց չեն հասկանում. նրանցից մեկը (a) մյուսից (b) խնդրում է ծխախոտ՝ որոշ նշաններով արտահայտելով ծխախոտի գաղափարը (երկու մասները բերնի մոտ տարած՝ օդ ներծծել ու դուրս փչել և այլն): Իմացինը, այդ նշաններից ստացած տեսողական տպավորությունների շնորհիվ, հասկանում է մյուսին, թեև անմիջապես չի տեսնում ծխախոտ առարկան. այստեղ հաղորդված նշաններն ընկալողի գիտակցության մեջ զարթեցնում են ծխախոտ առարկայի հասկացությունը ու բառային ձևը, որի շնորհիվ էլ նա հասկանում է: Երկրորդ դեպքում, նույն մարդը մյուս



սին ցույց է տալիս մի իր, որ վերջինս երբեք չի անսել և որի մասին ոչ մի գաղափար չունի։ Այս դեպքում, ի հարկե, երկրորդն անմիջապես ունենում է որոշ պատկերացում, բայց դրան հասկառակ նա չի հասկանում, թե ինչ բան է այդ իրը, որովհետև չի ճանաչում այն, և հետևաբար, իր գիտակցության մեջ չունի այդ իրի բառ-անվանումն ու բառիմաստ-հասկացությունը։

Այստեղից հետևում է, որ կոնկրետ առարկաների հետ ունեցած հարաբերությունների միջոցով և հենց դրանց ընթացքում մենք ճանաչում ենք այդ առարկաները և դարձնում մեր գիտակցության սեփականությունը՝ այդ առարկայի հասկացությունը պարունակող անվանումներով՝ բառերով, և ոչ այդ առարկաների պատկերացումներով։ Այսպիսով բառաձևի և բառիմաստի միջև հասարակական պրակտիկայի շնորհիվ ստեղծվում է ձևի ու բովանդակության միասնություն հենց բառի ծագման պրոցեսում, և այն ընդհանուր հասկացությունը, որ մենք վերնանվանեցինք բառիմաստ, տրտացույցում է այդ հասարակական պրակտիկան։ Հետևաբար այդ ընդհանուր հասկացությունը, այսինքն բառիմաստը տվյալ լեզվական հանրության բոլոր անդամներին ընդհանուր, լեզվական ձևի ու հասարակական գործունեության արտաքին իրականության տարրերի (առարկաներ, երևույթներ և այլն) միջև ստեղծված փոխհարաբերությունն է։ Բայց չէ՞ որ մարդը հարաբերության մեջ է մտնում իրեն շրջապատող բազմաթիվ ու բազմատեսակ առարկաների հետ, որոնցից յուրաքանչյուրը շնայած նույն տեսակի մյուս առարկաների հետ ունեցած նմանություններին, ունի նաև իր առանձնահատուկ հատկանիշները, մինչդեռ լեզվի մեջ այդ առանձին առարկաների յուրահատկությունները վերացվում, անտես են առնվում։ Այո, լեզվի մեջ մենք կատարում ենք հասարակական փորձի դասդասում, ընդհանրացում ու վերացում։ Մեզ շրջապատող բազմաթիվ ու բազմատեսակ առարկաները վերածելով այլ և այլ դասերի (կարգերի) մենք մի կողմ ենք թողնում տվյալ դասի մեջ մտնող առարկաների մասնակի հատկանիշները և միացնում այդ բոլորը նրանց միջև եղած ընդհանուր հատկանիշների հիմամբ, այսինքն՝ իրականում եղած մասնավորներից մեր հասարակական փորձի շնորհիվ մենք մեր գիտակցության մեջ ստեղծում ենք այդ մասնավորների ընդհանուր հասկացությունը։ Իսկ ընդհանուրն ու մաս-



նախորդ զիտակտիկական անխախտելի միասնություն են կազմում:  
 «Առանձինը գոյություն չունի այլ կերպ, —ասում է Լենինը,—քան  
 այն կապակցությամբ, որը տանում է դեպի ընդհանուրը: Ընդ-  
 հանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի մի-  
 ջոցով: Ամեն մի առանձին (այսպես թե այնպես) ընդհանուր է:  
 Ամեն մի ընդհանուր առանձինի մասնիկը կամ կողմը կամ էութ-  
 թյունն է: Ամեն մի ընդհանուր միայն մոտավորապես է ընդ-  
 գրկում բոլոր առանձին առարկաները: Ամեն մի առանձին մշտ-  
 նում է ընդհանուրի մեջ ոչ լիովին և այլն և այլն»<sup>1</sup>: Այսպիսով  
 բառիմաստը՝ լինելով ընդհանուրը՝ յուր մեջ է առնում առանձին  
 առարկաները, բազմաթիվ մասնավորները՝ նրանց միջև եղած  
 ընդհանուր հատկանիշների շնորհիվ, և իբրև այդպիսին էլ, նա,  
 այդ ընդհանուրը, գոյություն ունի միայն մեր դիտակցության  
 մեջ: «Լեզվի մեջ կա միայն ընդհանուրը («ЭТО? ամենից ընդհա-  
 նուր բառն է»), ասում է Լենինը<sup>2</sup> «...Առանձնակին կատարյալ  
 կերպով չի կարող արտահայտված լինել... ամեն մի բառ (խոսք)  
 արդեն ընդհանրացնում է... Չգացումը ցույց է տալիս իրականը,  
 միտքն ու բառը՝ ընդհանուրը»<sup>3</sup>: Ընդհանուրի ստեղծմամբ իսկ  
 մարդը կատարում է վերացում՝ կոնկրետ առարկաների իրական  
 առանձնահատկություններն անտեսելով և դրանց փոխարեն իբր  
 դիտակցության մեջ ստեղծելով ընդհանուրը: Այս բանը ցայտուն  
 կերպով նշել է Լայբնիցը, որի խոսքերը յուր «Փիլիսոփայական  
 տեսության հիմունքներում» մեջ բերելով՝ Լենինը շատ է հավանում: «Չգա-  
 յական ընկալումը տալիս է առարկան, իսկ միտքը՝ նրա անունը:  
 Մտքի մեջ չկա ոչինչ, որ չլինի զգայական ընկալման մեջ (NB),  
 բայց այն, ինչ որ զգայական ընկալման մեջ տրված է իրապես,  
 մտքի մեջ գտնվում է միայն անվանապես, անունով: Միտքը  
 բարձրագույն էակն է, աշխարհի կառավարողը, բայց միայն ա-  
 նունով, և ոչ՝ իրականում (լավ է ասված!): Բայց ինչ է անու-  
 նը: Տարբերակման համար ծառայող նշան, աչքին ընկնող ինչ-որ  
 հատկանիշ, որը հստակ դարձնում հմ առարկայի ներկայացուցիչը,  
 որ բնութագրում է առարկան, որպեսզի հիշեմ նրան յուր ամ-

<sup>1</sup> Լենին, Երկեր հ. 13, էջ 421,

<sup>2</sup> Ленинский сборник, т. XII, стр. 23.

<sup>3</sup> Անդ, էջ 219.



բողջականութեան մեջ<sup>1</sup> Այս խոսքերն արժանացել են Լենինի հաճանութեանն այն պատճառով, որ դրանց մեջ ճիշտ կերպով արված է առարկաների ու բառիմաստի փոխհարաբերութիւնը: Մեզ շրջապատող բաղմաթիվ իրական, մասնավոր առարկաները հասարակական գործունեութեամբ կուտակված փորձի շնորհիվ գասդասում ենք՝ մի դասի մեջ առնելով «աչքին խփող» միևնույն ընութագրող հատկանիշը ունեցող բաղմաթիվ առարկաները, մի կողմ թողնելով նրանց մասնակի հատկանիշները: Այսպիսով մենք առարկաների միջև եղած այն ընդհանուրն ենք վերցնում, որ հասուն է այս կարգի առարկաներից բոլորին, հանդիսանում է այս կարգի առարկաները մյուս կարգի առարկաներից տարբերակող հատկանիշը: Այս ընդհանրացումն ու վերացումն անշուշտ լեզվի մեջ հենց սկզբից և եթ հանդես չեն եկել: Իր զարգացման նախնական, ստորին աստիճանի վրա, ինչպես գիտակցութիւնը, այնպես էլ լեզուն հանդես է եկել առավել չափով կոնկրետ անմիջականութեամբ՝ արտաքին աշխարհի նկատմամբ: Այսպես, դեռ նոր մարդ դարձող մեր նախահայրերի համար աղքատիկ հասարակական փորձի շնորհիվ իրարից բոլորովին տարբեր բաներ էին առվի ջուրը, լճացած ջուրը, գետնից դեպի վեր բխող աղբյուրի ջուրը և այլն. իր այդ աղքատիկ ճանաչողութեան համապատասխան էլ նախամարդն ըմբռնում էր դրանք իբրև տարբեր առարկաներ և ունենում տարբեր հասկացութիւններ: Հետագայում, հասարակական կյանքի զարգացման ընթացքում և նորանոր փորձերի շնորհիվ մարդը գտնում է այդ բոլորի՝ իբրև մի կարգի առարկաների՝ ընդհանուր հատկանիշը և դրան համապատասխան էլ ստեղծում ջուր բառը՝ իբրև ընդհանուր հասկացութիւն՝ յուր բոլոր մասնակիութիւնների համար: Այդպես են ստացվել մանավանդ այսպես կոչված վերացական հասկացութիւնները՝ կոնկրետից: Հայերեն ըմբռնել ծագում է բուն արմատից, հունարեն՝ воззрение «հայացք», мировоззрение «աշխարհայացք» — տեսնել արմատից, ֆրանսերեն comprendre «հասկանալ, ըմբռնել» — prendre «վերցնել» արմատից և այլն: Անսահման օրինակներ կարելի է բերել այն մասին, որ լեզուների այդ վերացական բառերն իրենց ծագմամբ կապված են միան-

<sup>1</sup> Անդ, էջ 141:



դամայն կոնկրետ երևույթների ու առարկաների ըմբռնման հետ։ Այս մասին շատ որոշակիորեն ասում է Մարքսը. «Բայց ի՞նչ կասեր (ծեր) Հեգելը, եթե այն աշխարհում իմանար, որ «ընդհանուրը» (Allgemeine) գերմանների ու հյուսիսայինների մոտ նըշանակում է ոչ այլ ինչ, քան համայնքի հողը (Gemeinland), իսկ «մասնավորը» (Sundre, Besondre) ոչ այլ ինչ, քան համայնական հողից առանձնված մասնավոր սեփականությունը (Sondereigen)։ Այստեղ տրամաբանական կատեգորիաները... ուղղակի բխում են «մեր հարաբերություններից»<sup>1</sup>։ Այս բոլորից հեշտ է եզրակացնել, որ հասկացությունները կազմվում և զարգանում են հասարակական. դործունեությամբ ստեղծվող փորձի հիմամբ, և որ բառիմաստը յուր ծագմամբ ու զարգացմամբ արտացոլում է հենց այդ հասարակական փորձը։ Բայց այդ բառիմաստի մի կողմն է միայն։ Բառիմաստի մեջ մենք գտնում ենք ոչ միայն արտաքին աշխարհի առարկան, իրը, այլ և մարդունեբանաշխարհի երևույթները։ Իրոք, չէ՞ որ մարդու համար գոյություն ունեն ոչ միայն արտաքին աշխարհի երևույթները, այլ և իր իսկ ներքին աշխարհը՝ յուր զգացումներով, ապրումներով, ցանկություններով ու ձգտումներով։ Կարո՞ղ է արդյոք մարդն իր այդ ներքին աշխարհը չդրսևորել լեզվի միջոցով։ Բնականաբար՝ ոչ։ Լեզվական յուրաքանչյուր միավորի մեջ մարդն արտահայտում է ոչ միայն արտաքին աշխարհի երևույթները, այլև իր վերաբերմունքը այդ երևույթների նկատմամբ, այդ երևույթների առաջացրած զգացմունքները և այլն։ Նշանակում է, խոսքի մեջ բառերը հանդես են գալիս ոչ միայն իբրև մտքի նշաններ, այլև՝ իբրև զգացական նշաններ՝ արտահայտելով խոսողի վերաբերմունքը, հոգեվիճակը, ցանկությունները և այլն։ Մովորական խոսակցության ժամանակ էլ լսողը կարող է գաղափար կազմել խոսողի հոգեկան վիճակի, արտահայտվածի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի մասին՝ դատելով խոսողի բառերի ընտրությունից, նըրանց դասավորությունից, ինտոնացիայից և այլն։ Խոսողն էլ իր հերթին ձգտում է այդ բանին, այսինքն՝ աշխատում է լսողին հաղորդել իր վերաբերմունքը, իր այս կամ այն զգացմունքը, հոգեկան ապրումները՝ կապված իր արտահայտածի հետ։

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. XXIV, стр. 34.



Այս երևույթի արդյունքը լինում է այն, որ լեզվի մեջ ստեղծվում է ոչ միայն բառիմաստների (հասկացությունների) արտահայտության համակարգ, այլև՝ զգացմունքների արտահայտության համակարգ: Լեզուն հանդիսանում է այդ երկու համակարգերի միասնությունը: Հենց դրա արդյունքն է այն, որ լեզվի մեջ, մանավանդ խոսակցական լեզվի մեջ, ստեղծվում են բազմաթիվ ու բազմատեսակ ձևեր, որոնք արտահայտում են խոսողի վերաբերմունքը տվյալ երևույթի, դործողության, այսինքն՝ յուր արտահայտած խոսքի նկատմամբ: Համեմատել, օրինակ, հետևյալ նախադասությունները. դե գնացե՛ք, գնացե՛ք, ելի՛, գնացե՛ք, ե՛. լավ, գնացե՛ք և այլն: Այս նախադասությունները բոլորն էլ նույն միտքն են արտահայտում, բայց որքան տարբեր է նրանցից յուրաքանչյուրի մեջ խոսողի կողմից դրված վերաբերմունքը: Այդպիսի բազմաթիվ դուզաձևերով, ահա, մարդը հաղորդում է ոչ միայն իր մտածածը, այլև՝ զգացածը: Այդ զգացմունքների արտահայտման համար լեզուն դիմում է հավելադիր բառերի (դե, էլի, է, մի և այլն), ինտոնացիայի, կրկնությունների օգտագործմանը և այլ միջոցների: Այդ միջոցները բազմազան են և կարող են խոսքին հաղորդել ամենանուրբ երանգավորումներ:

Կարևորն այստեղ այն է, որ դրանք ծառայում են մեր ապրումների, վերաբերմունքի, ցանկության դրսևորմանը: Այդ պատճառով էլ այդպիսի արտահայտությունները չպետք է նույնացնել պատկերավոր կամ բանաստեղծական մտածողության հետ: Պատկերավոր մտածողությունն արտահայտում է օբեկտիվ աշխարհի մաս, տպավորիչ դույներով, մինչդեռ զգայական արտահայտում է սուբեկտիվը, առանց փոխելու օբեկտիվի էությունը: Իհարկե, դա չի նշանակում, թե այստեղ սուբեկտիվը ինչ-որ ինքնաբավ, ինքն իրենից սկսվող և իրենով ավարտվող, մյուսներից անկախ մի միավոր է. ոչ: Քանի որ յուրաքանչյուր մարդ հասարակական մարդ է, քանի որ հասարակության յուրաքանչյուր անհատը յուր մեջ կրում ու դրսևորում է տվյալ հասարակությանը հատուկ գիտակցությունն ու հոգեբանությունը, ապա պարզ է, որ այդ զգացական էլ հասարակական է: Բայց, ի տարբերություն պատկերավոր մտածողության, զգացականը դրսևորում է հենց հասարակության հոգեկան հատկանիշները,



ինչպես ժամանակակից հայերենում բուրժույ, կուլակ, չարչի և այլն, որոնք քաղաքական գնահատություն են արտահայտում:

Զգացական այդ արտահայտչական միջոցները հաճախ առաջ են բերում նույն իմաստն արտահայտող բառեր՝ հոմանիշներ, որոնք, ինչպես և վերը թված միջոցները, ոչ թե փոխում են բառիմաստը, ոչ թե փոխում են տվյալ առարկայի կամ երեւոյթի հասկացությունը մեր գիտակցության մեջ, այլ արտահայտում են մեր հավանությունը, համաձայնությունը, ախորժանքը կամ տհաճությունը, համաձայնությունը կամ տարաձայնությունը, ցավակցությունը, համակրանքը կամ հակակրանքը տվյալ երևութի նկատմամբ: Այսպես, օրինակ, երբ ասում ենք ուտել, փորը լցնել, լափել, խծոել, կամ ծիծաղել, հրուհրուալ, սեպերը բաց անել և այլն՝ մենք իրականում նույն երևույթն ենք արտահայտում, բայց՝ նշում ենք նաև մեր վերաբերմունքը: Եվ այդ վերաբերմունքն ըմբռնելի է դառնում բոլորին հենց այն բանի շնորհիվ, որ այս կամ այն երևույթի նկատմամբ տվյալ հասարակությունն ունի այս կամ այն վերաբերմունքը: Մեզ շրջապատող երևույթները հասարակության կողմից արժանանում են այս կամ այն գնահատականին, իսկ այդ հասարակական գնահատականն էլ դրսևորվում է անհատի միջոցով՝ տվյալ իրողության նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքով: Այսպիսով բառիմաստն իր մեջ է առնում ոչ միայն առարկայի հասկացությունը, այլև՝ նրա գնահատությունը հասարակության կողմից:

Լեզվաբանության մեջ ավելի շատ տեսություններ են արտահայտվել այն մասին, թե ինչպես է կազմվել բառաձևը, թե ինչու այս հնչյունական խումբը տրված է այսինչ հասկացության և ոչ մի ուրիշին, և թե ինչ կապ կա բառաձևի ու բառի բովանդակության միջև: Այժմ արդեն անվիճելիորեն ընդունված պետք է համարել այն տեսությունը, թե ծագումաբանական տեսակետից որևէ բնական կամ տրամաբանական կապ չկա բառի հնչյունական կազմի և նրա բովանդակության միջև, եթե չհաշվենք բնաձայնական բառերը, որոնք լեզվի բառապաշարի մեջ չափազանց փոքր մասն են կազմում: Ինչպես են ուրեմն կազմվել բառաձևերը: Այս առթիվ լեզվաբանության մեջ դեռևս շարունակում են արտահայտվել այսպես կոչված բնաձայնության և միջարկության (բացառականության) տեսությունները: Լեզվա-



բաններին շատերը գտնում են, որ նախամարդն իր շրջապատի  
 ձայների նմանողությամբ հորինել է բնածայնական արմատներ-  
 ը, և ապա դրանց հետագա փոփոխումներով ու դրա շնորհիվ  
 բնական ձայնի և այդ բնածայն բառերի անմիջական կապի  
 խզմամբ՝ ստացել նորանոր բառեր: Ըստ այս տեսության լեզու-  
 ների բառարմատներն սկզբում եղել են բնածայն բառերը, ինչ-  
 պես՝ կու-կու, լըխկ, չըխկ, քըխկ և այլն: Այս տեսությունը սխալ  
 է հենց այն պատճառով, որ բառաստեղծական պրոցեսի հիմքն է  
 համարում մարդու նմանողական գործունեությունը՝ լսողական  
 տպավորությունների հիման վրա: Մինչդեռ բնածայնական բա-  
 ռերը միայն նմանողության արդյունք չեն: Յուրաքանչյուր  
 բնածայնական բառի ստեղծումն արդյունք է երկու բարդ պրո-  
 ցեսի: Նախ՝ որպեսզի կարողանանք այս կամ այն բնական ձայ-  
 նը բառ դարձնել, պետք է վերանանք հենց այդ բնական ձայ-  
 նից, այսինքն՝ կազմենք նրա հասկացությունը: Երկրորդ՝ որ-  
 պեսզի այդ ձայնը վերածենք բառի, մենք պետք է վերանանք  
 մեր լսողական անմիջական տպավորություններից և փոխարի-  
 նենք դրանք նման հնչյուններով. չէ՞ որ մեր բնածայն բառե-  
 րից և ոչ մեկն էլ ճիշտ վերարտադրությունը չէ այն բնական  
 ձայնի, ինչ-որ լսում ենք: Իսկ եթե այդպես է, ապա մենք  
 պետք է ունենանք և՛ հնչունական զարգացած համակարգ, և՛  
 բնական ձայնը հնչյունների վերածելու, այսինքն՝ բնականից  
 վերանալու և մեր հնչյունական պատկերացումներով արտահայ-  
 տելու ունակություն: Իսկ այդ ենթադրում է լեզվի զարգացման  
 մի շատ ավելի բարձր աստիճան: Վերջապես, եթե մարդկային  
 լեզվի բառապաշարը առաջացել է բնածայն բառերից, ապա՝ քա-  
 նի որ բնական ձայները նման են իրար, պետք է բոլոր լեզու-  
 ների բառապաշարի հիմնական մասը նույնը լինի: Ինչ վերաբե-  
 րում է միջարկությունների տեսության, ապա այն ևս ճիշտ չէ:  
 Ըստ այս տեսության սկզբում մարդիկ ունեցել են բնական բա-  
 ցազանչություններ, որոնք ուղեկցել են նրա այս կամ այն  
 զգացողությունը: Հետագայում այդ բացազանչությունները  
 դարձել են համապատասխան զգացումների կամ երևույթների  
 մշտական անունները: Բայց եթե այսպես լիներ, ապա բոլոր  
 մարդկանց մոտ էլ միևնույն զգացումը, որ նույն բնական բա-  
 ցազանչությունն էր առաջացնում, պետք է ունենար միևնույն



անվանումը. բացի այդ, չէ՞ որ նախամարդն այնքան նուրբ  
զգացողությունն չէր կարող ունենալ, որ յուրաքանչյուր երևույ-  
թի և առարկայի համար ուրույն զգացում ու համապատասխան  
ձայնարկությունն ռենհնար, որ հետագայում այդ առարկայի կամ  
երևույթի ու նրա հարուցած զգացման անվանումը դառնար:  
Ի վերջո, որքան էլ անզարգացած համարենք նախամարդուն և  
նրա լեզուն, չենք կարող ժխտել, որ այդ անզարգացած վիճա-  
կում էլ նա լեզվով պետք է որոշ մտքեր հաղորդեր: Ուստի և  
բնազդական ձայները չէին կարող նրա հաղորդակցման միջոցը  
լինել: Այս երկու տեսություններն էլ խիստ կերպով և իրավա-  
ցիորեն քննադատվել են. որոշ լեզվաբաններ նույնիսկ ծաղրա-  
քով կոչել են առաջինը՝ «հաֆ-հաֆ-ի տեսություն» (բնաձայ-  
նություն), երկրորդը՝ «ֆու-ֆու-ի տեսություն» (միջարկու-  
թյուն): Ավելի հետաքրքրական և ուշադրամ է Լուդվիգ Նուա-  
րեի «աշխատանքային ճիշերի» տեսությունը: Ըստ այդ տեսու-  
թյան նախապես առաջացել են բայերը այն բնական ճիշերից,  
որ արձակել է մարդն աշխատանք կատարելիս: Բայց Նուարեի  
այս տեսությունն էլ չի լուծում մարդկային լեզվի հարուստ ու  
բազմաբովանդակ բառապաշարի գոյացման հարցը, որ դարձյալ  
կապում է ոչ կամային, բնազդական, թեկուզ և աշխատանքի  
հետ արձակվող ճիշերին: Ինքը Նուարեն էլ վերջին հաշվով այդ  
բոլորի հիմքն է համարում մարդկային բանականության ստեղ-  
ծագործ գորությունը:

Բառերի ստեղծումը ճիշտ բացատրելու համար անհրաժեշտ  
է ճիշտ կերպով գնահատել հնչյունական լեզվի այն նախնական  
տարրերը, որ մարդը ժառանգել է յուր կենդանական վիճակից:  
Մենք ասացինք արդեն, որ կենդանական վիճակում ունեցած  
բնազդական ճիշերը նախամարդու կողմից գիտակցվում են և  
վերածվում բառ-մտածության: Մարդացման պրոցեսի հետ, գի-  
տակցության առաջացման զուգընթաց այդ նախնական ճիշերի  
գիտակցումով ու իբրև հաղորդակցման միջոցներ գործածելով մեր  
նախնիները ձեռք են բերում առաջին լեզվական ատաղձը: Այդ  
բառ-մտածություններն այլևս բնական ճիշեր ու բացազանչու-  
թյուններ չեն, այլ գիտակցված և իրենց իսկապատով ու գործա-  
ծությամբ տարբերակված հնչյունական կոմպլեքսներ: Հնչյու-  
նական լեզվի այս ատաղձն ունենալուց հետո մարդուն մնում էր



հարստացնել ու զարգացնել այն: Իսկ այդ հարստացումն ու զարգացումը կատարվում է ոչ թե բնական ձայների նմանողությամբ կամ բնազդական բացազանչությունների հիմամբ, այլ հասարակության, մարդկային արտադրական կոլեկտիվի ստեղծագործական ջանքերով: Այս առթիվ Մաուր հանձարեղ մի դրույթ է արտահայտել, որ և մենք միանգամայն ընդունելի ենք համարում: Յուր «ЯЗЫК» հոդվածում Մաուն ասում է. «Լեզուն ստեղծվել է մարդկային կոլեկտիվի կողմից այնպես, ինչպես նրա հասարակական կեցության առաջին աստիճաններում՝ նյութական կուլտուրայի հուշարձանները, առաջին անհրաժեշտության տարիկաներն ու իրենք՝ կոլեկտիվ արտադրության տեսակները, որսը և զանազան արհեստներն ու խաղերը և ինչպես նրա գոյության հետագա աստիճաններում առանձնացած արվեստները, գեղարվեստը, էպոսը, պարը, երգը և երաժշտությունը...»<sup>1</sup> Մաուի այս դրույթը միանգամայն ճշմարիտ է. լեզուն մարդկային արտադրական հասարակության ստեղծագործությունն է, այնպիսի ստեղծագործություն, ինչպիսին Փոլկլորը: Ուստի և բառերի ծագումը, լինեն դրանք նախնական բառ-մտածություններ, թե հետագայի անկախ բառերը, պետք է դիտել իբրև կոլեկտիվ ստեղծագործության արդյունք: Բայց ի՞նչ է նշանակում այդ նշանակում է արդյոք, որ նախնական արտադրական կոլեկտիվ անդամները հավաքվել ու միասին ստեղծել են այս կամ այն բառը: Ոչ, չի նշանակում: Մարդիկ իրար հետ խորհրդակցելով չեն ստեղծագործել բառերը: Նրանք ստեղծագործել են բառերն այնպես, ինչպես ստեղծագործել և ստեղծագործում են ժողովրդական երգերը, էպոսը և այլն: Եվ որովհետև Փոլկլորի ծագման (ստեղծագործության) ու նրա հետագա զարգացման պրոցեսը գիտության մեջ միանգամայն լավ է ուսումնասիրված, ապա մենք ավելորդ չենք համարում որոշ համեմատությամբ բացատրել բառերի ստեղծագործությունը: Հայտնի է, որ յուրաքանչյուր ժողովրդական ստեղծագործություն իր ծագմամբ կրում է անհատական բնույթ, այսինքն, ժողովրդական ստեղծագործության հեղինակը որևէ անհատն է. անշուշտ հնարավոր է, որ նույն թեման նույն կամ տարբեր ժամանակներում և կամ նույն կամ

<sup>1</sup> Н. Я. М а р р, Избранные произведения, т. 2, стр. 127.



տարբեր տեղերում ստեղծագործութեան նյութ դառնա տարբեր  
 անհատների մոտ, և այդ տարբեր անհատներն իրարից անկախ  
 ստեղծագործեն այս կամ այն ժողովրդական ստեղծագործու-  
 թյունը: Կարևորն այստեղ այն է, որ ժողովրդական ստեղծագոր-  
 ծությունն իր սկզբնական հեղինակումով կապվում է հասարակա-  
 կան անհատների հետ: Միայն այն բանից հետո, երբ անհատը,  
 կամ անհատները, ավելի ճիշտ՝ մեկերը ստեղծագործում են, հա-  
 սարակությունը յուրացնում է այդ ստեղծագործությունը, մշա-  
 կում ու զարգացնում դարերի ընթացքում, դարձնում իր սեփա-  
 կանը. այդ մեկերի ստեղծագործությունն անցնում է ժողովրդի  
 ստեղծագործական բովով և, զրկվելով յուր նախնական ստեղծա-  
 գործութեան անհատական բնույթից, դառնում է ժողովրդի ստեղ-  
 ծագործությունը: Որ անհատի ստեղծագործությունը դառնում է  
 ժողովրդական, մի պատահական երևույթ չէ: Հասարակութեան  
 կյանքի զարգացման տվյալ էտապում այս կամ այն դեպքի, երևույ-  
 թի գեղարվեստական մշակումը հանդես է գալիս որպես անհրաժեշ-  
 տություն և ստեղծում է համապատասխան հասարակական տեն-  
 դենց, հասարակական մտայնություն: Ստեղծված անհրաժեշտու-  
 թյունն էլ հիմք է հանդիսանում այն բանի, որ ստեղծագործող մեկը  
 հեղինակում է տվյալ ստեղծագործությունը: Տվյալ դեպքում անհա-  
 տը հանդես է գալիս որպես հասարակական կյանքում ստեղծված  
 անհրաժեշտութեան դրսևորողը, ստեղծված հասարակական պա-  
 հանջմունքի բավարարողը. այսպիսով՝ նա մարմնացնում է իր  
 մեջ և՛ ստեղծված անհրաժեշտությունը, և՛ տենդենցը, և՛ դրան  
 գործնականում բավարարելու ստեղծագործական ձիրքը: Միայն  
 այս բանի շնորհիվ է, որ անհատի ստեղծագործությունը դառ-  
 նում է ժողովրդի սեփականությունը և յուր հետագա մշա-  
 կումների ընթացքում միանգամայն կորցնում իր ծագման ան-  
 հատական բնույթը: Ծիշտ այսպիսի պրոցես է ներկայացնում  
 նաև բառերի (նախապես բառ մտածությունների) ստեղծագոր-  
 ծությունը: Կոլեկտիվի աշխատանքային պրոցեսում մարդիկ գի-  
 տակցում են նորանոր հարաբերություններ, իրեր, առարկաներ  
 ու երևույթներ, ոչ միայն գիտակցում, այլև ստեղծում են այդ-  
 պիսիք և բնականաբար անհրաժեշտություն է ստեղծվում այդ  
 նոր հարաբերությունները, իրերը, երևույթներն ու առարկաներն  
 անվանելու: Ահա այս անհրաժեշտութեան արդյունքն էլ լինում



է այն, որ մեկը կամ մեկերը՝ իրարից անկախ՝ ստեղծագործում են տվյալ բառը, որ և նույն անհրաժեշտութեան շնորհիվ ընդունվում է կոլեկտիվի կողմից։ Հնարավոր է, որ միաժամանակ մի քանի բառեր ստեղծագործվեն նույն առարկայի համար և կոլեկտիվը դրանցից մեկը յուրացնի, հնարավոր է նաև, որ այդ անհատական ստեղծագործութեամբ ստացված բառը հետագա մշակումների ու փոփոխումների ենթարկվի կոլեկտիվի կողմից։ Կարևորն այստեղ այն է, որ բառի ստեղծագործութեանն էլ իբր ծագմամբ անհատական բնույթ ունի, բայց հենց այդ դեպքում էլ նա արդյունք է հասարակական կյանքում ստեղծված անհրաժեշտութեան և իր հետագա դոյութեան ու դործածութեան համար անհրաժեշտ է, որ նա դառնա կոլեկտիվի սեփականութեանը և հենց դրանով իսկ դադարի իր ստեղծագործութեան պրոցեսի անհատական բնույթն ունենալուց։ Վերջապես, այս նշանակում է, որ այստեղ էլ այդ մեկերը հանդես են գալիս իբրև հասարակական կյանքում ստեղծված անհրաժեշտութեան կրողն ու դրսևորողը։ Որ իսկապես այս ճանապարհով են բառերն ստեղծվում, այդ առթիվ մի հիանալի փաստ ենք գտնում Նապերսոնի «Լեզու» (Language) գրքում։ Այդ գրքի 242-րդ էջում հեղինակը քաղվածորեն բերում է Փրանսիացի ճարտարապետ Վիկտոր Առնոյի ուսումնասիրութեանից՝ վայրենիների մասին։ Վիկտոր Առնոն երկար ժամանակ ապրել է Հարավային Ամերիկայի Բոտակալտոս ցեղի մոտ և ուսումնասիրել է մի քանի ցեղերի լեզուները։ Նա պատմում է, որ այդ ցեղերի վայրենիների մեջ լինելով, ինքը բաղժիցս նկատել է, որ երբ նրանք տեսնում են նոր առարկա, նրանցից մեկը հանապազատից մի անուն է տալիս, կարծես թե գտած լինելով մի հանկարծական գաղափար, մյուսներն անմիջապես կրկնում են այդ և այդպիսով բառը դառնում է ընդհանուրի սեփականութեանը։ Այս նույն բանը, ինչպես պատմում է նա, հաճախ պատահում էր նաև այնպիսի առարկաների նկատմամբ, որոնք արդեն ծանոթ էին նրանց և անուն ունեին։ Այս երևույթը տեղի է ունենում միշտ և ամեն տեղ, նաև ամենազարգացած լեզուներում, մեր իսկ առօրյա կյանքում, բայց մեզանից ոչ ոք ուշադրութեան չի դարձնում դրան, ոչ ոք չի նկատում, այնքան բնական է այդ երևույթը։ Գիր ունեցող լեզուներում ընդհանրապես նոր արմատներ չեն ստեղծվում, բայց



չէ՞ որ ստեղծվում են բազմաթիվ նորանոր բառեր: Ովքեր են ստեղծում այդ բառերը. չէ՞ որ դարձյալ անհատները՝ բանաստեղծներ, գիտնականներ, արվեստագետներ, մի խոսքով՝ դարձյալ ինչ որ մեներ: Ենթադրենք թե այս ինչ երևույթի համար անհրաժեշտ է մի բառ. այս կամ այն բանաստեղծը կամ գիտնականը հորինում է այդ բառը, իսկ այնուհետև մյուսներն էլ, յուրացնելով այն, դարձնում են հասարակության սեփականությունը՝ իբրև ընդհանուր լեզվի մի անհրաժեշտ տարր:

Սակայն մեր օրերի այս երևույթը նաև որակական տարբերություն ունի նախնական բառաստեղծական պրոցեսի հետ: Այժմ բառերը կաղմվում են արդեն պատրաստի արմատներից՝ քարդության, ածանցման և այլ միջոցներով: Մինչդեռ բառաստեղծական այդ նախնական պրոցեսում ստեղծվել են արմատները: Բայց ինչպես են ստեղծվել նրանք: Արդյո՞ք այդ ստեղծագործող մեկերը իրենցից հորինել կամ ինչ որ ներշնչված ոչնչից ստեղծել են դրանք: Ի հարկե, ոչ: Վերը մենք ասել ենք արդեն, որ նախաժարդը դեռևս կենդանական վիճակից ժառանգել է որոշ միջեր, որ ժարդ քառնալու պրոցեսում վերածել է բառային անվանումների: Անշուշտ դրանք եղել են սահմանափակ քանակով և, ինչպես կտեսնենք, եղել են անբաժանելի հնչյունական կոմպլեքսներ: Ահա այդ հնչյունական կոմպլեքսների, իրենց ունեցած այդ պատրաստի ատաղձի օգտագործումով, նրանց այլափոխումներով է, որ մեկերը ստեղծագործել են նորանոր հնչյունական կոմպլեքսներ, նորանոր բառաձևեր: Այս բանը նույնպես ապացուցել է սովետական լեզվաբան Մառը՝ բառափնջերի իբ հայտնի տեսությամբ, ըստ որի մի նախնական հնչյունական կոմպլեքսը ատաղձ է դառնում բազմաթիվ նորանոր բառերի:

Հնչյունի և հնչալթի ծագումը. — Այժմ մեզ հետաքրքիր է պարզել, թե ինչպես են առաջացել հնչյունները, թե արդյո՞ք լեզվաստեղծական պրոցեսում մարդիկ ինչպիսի հնչյունական համակարգ են ունեցել, արդյո՞ք նախաժարդու լեզուն էլ ունեցել է այնպիսի ճոխ հնչյունական համակարգ. ինչպիսին ունեն մեզ հայտնի, նույնիսկ զարգացման ամենացածր աստիճանի վրա գտնվող, լեզուները: Այս վերջին հարցին մենք առանց երկբայության կարող ենք պատասխանել բացասաբար: Իհն ափելին, լեզվաստեղծական այդ նախնական շրջանում հնչյուններ այս



բառի իսկական իմաստով չեն եղել: Պարզենք այս միտքը: Մենք ասել ենք արդեն, որ կապիկներն ունեն որոշ ճիշեր: Այդ ճիշերը ներկայացնում են որոշ հնչյունական խմբեր, և թեև այդ խմբերի մեջ դեռևս բոլոր հնչյունները լիովին տարբերակված ու տարբերությամբ չեն, բայց և այնպես մի քանի հնչյուններ (մ, գ, խ, կ) բավականաչափ նման են մարդկային հնչյուններին, ինչպես և որոշ ձայնավորներ (օ, ու, ա) պարզորոշ կերպով ձևավորված են արդեն: Նշանակում է արդյոք, որ կապիկների մոտ մենք գտնում ենք հնչյուններ այն իմաստով, ինչ իմաստով բնորոշվում է մարդկային հնչյունը: Բանն այն է, որ կապիկների այդ ճիշերը կապիկների համար միանգամայն անբաժանելի են հնչյունական տեսակետից. նրանք կազմում են հնչյունների այնպիսի մի ամբողջական միասնություն, որի մեջ առանձին հնչյուններն իրարից անկախ արտասանվել և ընկալվել կապիկի կողմից չեն կարող: Միայն մարդն է, որ իր հնչյունական պատկերացումների բազմազանություն շնորհիվ կարող է տարբերակել կապիկի այդ ճիշերի մեջ որոշ հնչյուններ: Նշանակում է, կապիկը թեև կարողանում է «արտասանել» որոշ հնչյունական խմբեր (ճիշ-եր), բայց նա չունի հնչյուններ, որովհետև առանձին հնչյունն, իբրև մի ինքնուրույն միավոր, չի կարողանում արտասանել և ոգ էլիսավորն է, չի գիտակցում. նա ունի օրինակ՝ գլսա (ողջույն բարեկամներին) ճիշ-հնչյունախումբը, բայց առանձին գ կամ խ չունի, ինչպես և չունի ոչ ամբողջ գլսա ճիշի, ոչ էլ գ կամ խ-ի գիտակցումը: Այսպիսով՝ կապիկի տարբերակված ճիշերը իրենց բազմազանությամբ հանդերձ հիմնված չեն առանձին հնչյունների անկախ արտասանության և, մանավանդ, գիտակցման վրա: Այդ ճիշերից յուրաքանչյուրը մի ամբողջական արտասանական միավոր է: Հետևաբար ամենազարգացած կապիկներն անգամ չունեն հնչյուններ:

Մարդը, մարդ դառնալու ժամանակ, ինչպես ասել ենք, ժառանգել է այդպիսի ունակություն. նա ևս ունեցել է ճիշ-բառեր, բայց դրանք ճիշտ այնպիսի արտասանական մի միավոր են կազմել, ինչպես այժմյան շիմպանզեի ճիշերը: Նախապես յուրաքանչյուր բառը հանդիսանում է մի հնչյունային բարդ կոմպլեքս, արտասանական մի անբաժանելի ամբողջություն, որի մեջ եղած հնչյուններն առանձին, իբրև ինքնուրույն միավորներ դեռևս



գոյությունն չունենալ. այնուհետև դարգացման հաջորդ շրջանում  
բառերն արտասանական տեսակետից բաժանելի են դառնում  
իրենց վանկային հնչյունախմբով, այսինքն՝ վանկատվում են, և  
վերջապես, աստիճանաբար այդ տարրերակում — հոգաբաշխումը  
հասնում է առանձին հնչյունների անջատմանը: Հնչյունները վե-  
րածվում են ինքնուրույն արտասանական միավորների, որին  
զուգընթաց էլ կատարվում է դրանց գիտակցումը: Այնուհետև  
բազմաթիվ կոնկրետ հնչյունների ընդհանուր հատկանիշների  
զուգորդությամբ մարդկային ուղեղը կատարում է աբստրակցիա,  
վերացում և, մի կողմ թողնելով առանձին հնչյունների միջև  
եղած աննշան տարբերությունները, նրանց ընդհանրությունների  
հիմամբ ստեղծում է այդ մասնակիությունների ընդհանուր հաս-  
կացությունը որպես հնչյունական հասկացություն, որպես  
հնչույթ: Ինչպես տեսնում ենք, հնչյունների դարգացումը կա-  
տարվում է բարդ, չտարրորոշված հնչյունախմբերից (ճիշ. բառե-  
րից) դեպի վանկերն ու ապա՝ առանձին հոգաբաշխ հնչյունները:  
Շատ բնական է, որ նախնական շրջանում այդ կոմպլեքս բառերը  
և հետևաբար նրանք բաղադրող հնչյունախմբերը սահմանափակ  
են եղել և աստիճանաբար ավելացել ու բազմատեսակ են դարձել:  
Իսկ այդ դարգացումը, ինչպես ճիշտ կերպով շեշտել է Մառը,  
սերտորեն կապված է մարդկային հասարակության ու մարդկա-  
յին մտածողության դարգացման հետ. նախնական շրջանում  
կոմպլեքս բառերը, որոնց մեջ առանձին հնչյունները գեռեա-  
լիքն ինքնուրույն միավորներ չեն գիտալցվում, արտահայտում  
են հենց նույն շրջանի մարդու չտարրորոշված մտածողությունը:  
Հասարակական կեցության դարգացման, իսկ դրա հիմամբ, նաև  
մտածողության դարգացման զուգընթաց դարգանում են նաև  
լեզուն ու նրա հնչյունական-արտասանական կողմը, մինչև որ,  
վերջապես, ստեղծվում է հնչույթը: Հնչույթի առաջացումն էլ  
իր հերթին առաջ է բերում մի այլ երևույթ: Յուրաքանչյուր  
լեզու յուր դարգացման ընթացքում ստեղծում է իրեն հատուկ  
հնչույթները, որոնց ամբողջությունը կազմում է տվյալ լեզվի  
արտասանական բաղան, այսինքն՝ իրեն հատուկ հնչյունական  
համակարգը:



Լեզվի զարգացման տեսությունները.— Մինչև այժմ, գրեթե բոլոր հատվածների մեջ, մենք արտահայտել ենք այն միտքը, թե լեզուն անընդհատ փոփոխվում ու զարգանում է: Այդ ի հարկե ընդհանուր առմամբ նորությունն չէ. լեզվաբանության մեջ վաղուց ընդունված է, որ լեզուն փոփոխվում է, և այդ մասին զանազան տեսություններ են առաջ քաշվել, որոնցից մի քանիսին անհրաժեշտ է ծանոթանալ:

Մինչև 19-րդ դարը, երբ դեռ լեզվաբանությունը ձևավորված չէր իբրև ինքնուրույն մի գիտություն, այլ կազմում էր բանասիրության (Ֆիլոլոգիայի) մի մասը, իշխում էր այն կարծիքը, թե լեզվի յուրաքանչյուր փոփոխություն նրա աղավաղումը, փչացումն է: Սրա համապատասխան էլ յուրաքանչյուր լեզվի պատմության մի շրջանը համարում էին դասական, կամ ինչպես կոչում էին «ոսկեդարյան» շրջան, իսկ մյուս շրջանները համարում էին ուղղակի լեզվի անկման, աղավաղման շրջաններ, համապատասխանաբար կոչելով «արծաթե դար», «երկաթե դար» և այլն: Իհարկե լեզվի պատմության նկատմամբ այդպիսի մոտեցումը հիմնովին սխալ է: Յուրաքանչյուր լեզվի պատմության մեջ նրա բոլոր փուլերը հավասար արժեք են ներկայացնում, իբրև այդ լեզվի զարգացման տարբեր աստիճաններ:

19-րդ դարի առաջին կեսում, երբ հիմնադրվեց պատմահամեմատական լեզվաբանությունը, այս տեսությունը խստորեն քննադատվեց, նոր լեզվաբանության հիմնադիրները ճիշտ կերպով ցույց տվին, որ լեզվի յուրաքանչյուր փուլը կարևոր է որպես նրա պատմական զարգացման մի հատվածը: Բայց այդ լեզվաբանները, ելնելով իդեալիստական փիլիսոփայության դիրքերից, լեզվի զարգացման շարժիչ ուժը համարեցին այսպես կոչված «ժողովրդի ոգին»: Այս տեսությունը բացի այն հիմնական սխալից, որ լեզուն կտրում էր հասարակական կեցությունից, վերնաշենքը՝ բազիսից, դուռ էր բացում նաև ռասայական «տեսության» առջև, լեզուների առանձնահատկությունները կապելով ցեղի, ժողովուրդի, ազգի հատուկ «ոգու» յուրահատկությունների հետ:



19-րդ դարի կեսերին առաջ է քաշվում բիոլիդիական, փուլ-  
դար-մատերիալիստական այն տեսությունը, թե լեզուն նույն  
օրինաչափություններով է՝ զարգանում, ինչպես բուսական ու  
կենդանական աշխարհը: Դարվի՛նից մեխանիկորեն կիրառվում  
էր լեզվի նկատմամբ, որն, իբրև թե, կենդանի օրգանիզմի նման,  
«ծնվում», «զարգանում», «ծերանում» ու «մեռնում» է: Բայց լեզ-  
վի նկատմամբ այդ տեսությունը սխալ է հենց նրանով, որ վեր-  
նաշենքային երևույթը նույնացվում է կենդանի օրգանիզմի հետ:

19-րդ դարի երկրորդ կեսում հիմնադրված հոգեբանական-  
ինդիվիդուալիզմի ուղղությունը հերքեց այդ տեսությունը և  
առաջ քաշեց այն տեսությունը, թե ընդհանրապես լեզվի զար-  
գացման ընդհանուր օրինաչափությունների մասին խոսել կա-  
րելի է: Դանի որ կան միայն «անհատական լեզուներ», ուստի  
և կարելի է խոսել այդ լեզուների փոփոխությունների մասին,  
որոնք արդյունք են անհատի հոգեկան գործունեության: Այս տե-  
սությունն ավելի քան հակադիտական է հենց նրանով, որ լե-  
զուն չի գիտում իբրև հասարակական երևույթ, հետևաբար խը-  
զում է դարձյալ բաղիսից, ամեն ինչ համարելով իրարից կազմ-  
ված անհատների հոգեբանության արդյունք:

19-րդ դարի վերջում առաջ քաշվեց այն տեսությունը, թե  
լեզվի մեջ փոփոխություններ մտցնողը և լեզվի զարգացման  
շարժիչ ուժը սերունդների հաջորդումն է: Իբրև թե, յուրաքան-  
չյուր սերունդ՝ չկարողանալով ճիշտ այնպես յուրացնել, ինչպես  
նախորդ սերունդը, փոխում է լեզուն: Այստեղ ևս հասարակա-  
կան կեցությունը անտես է առնվում և շեշտվում սերունդների  
դերը՝ որպես լեզուն մեքենայաբար փոփոխողների, մի բան, որ  
հիմնովին սխալ է:

Վերջապես բուրժուական նորագույն լեզվաբանությունը  
փորձում է գտնել լեզվի զարգացման որոշ ընդհանուր օրինաչա-  
փություններ: Օրինակ, նորագույն ուսումնասիրություններում  
շեշտվում է, որ լեզվի զարգացումը կապված է նրա կառուցվածքի  
փոփոխության հետ, ասենք, համադրականից վերլուծականին  
անցնելով կամ հակառակը: Առաջ է քաշվում նաև այն տեսու-  
թյունը, որ լեզուների զարգացումը գնում է կոնկրետից դեպի  
ընդհանուր-վերացականը: Այստեղ, ի հարկե, որոշ ճշմարտու-  
թյուն կա, բայց դա միայն մի կողմն է: Լեզուների պատմու-



Թյուշը ցույց է տալիս, որ ճիշտ նույն ձևով տեղի է ունենում զարգացումը վերացական-ընդհանուրից՝ դեպի կոնկրետ-մասնավորը: Դրա լավագույն ապացույցն են հանդիսանում ճոխապես զարգացած և օբյեկտը զարգացող մասնագիտական լեզուները, թեև իհարկե, այս կոնկրետությունը որակապես տարբեր է նախնական շրջանի կոնկրետությունից:

Այս բոլոր տեսությունները ձախողման են դատապարտված հենց այն հիմնական պատճառով, որ լեզուն դիտում են հասարակական կեցության զարգացումից անկախ: Մինչդեռ լեզվի զարգացումը կարելի է լուսաբանել այն ժամանակ միայն, երբ նա դիտվում է հասարակության զարգացման հետ ունեցած անխզելի կապի մեջ: Մակայն, նախքան լեզվի զարգացման տարբեր փուլերի մասին խոսելը, տեսնենք, թե ինչ օրենքներով է փոփոխվում ու զարգանում լեզուն:

Համաբանություն և ընդհանրացում. բանակ և որակ.— Լեզվաբանության մեջ վաղուց արդեն ընդունված է համարանության (անալոգիայի) դերը լեզվի զարգացման, հատկապես հնչյունափոխության մեջ: Անհրաժեշտ է ավելացնել միայն, որ այդ վերաբերում է ոչ միայն հնչյունափոխությանը, այլև լեզվի բոլոր կողմերին և որ համաբանությունը հանդիսանում է լեզվի մեջ ոչ միայն կանոնավորող ու կարգավորող, այլև քայքայող, կործանող ու ասեղծագործող երևույթ: Յուրաքանչյուր լեզվի յուրաքանչյուր փուլում կարելի է տեսնել այդ: Վերցնենք օրինակներ այժմյան հայերենից. հայտնի է, որ ի-ով վերջացող գոյականները, իբրև ընդհանուր կանոն, ենթարկվում են ու հոլովման, ինչպես՝ գինի—գինու, այգի—այգու և այլն: Բայց քանի որ ժամանակակից հայերենում ամենից ավելի տարածված է ի հոլովումը, ուստի և համաբանությամբ այդ բառերն էլ երբեմն, հատկապես խոսակցության մեջ, ենթարկվում են ի հոլովման, (այգիի, գինիի), մանավանդ հատուկ անունները (Ռաֆֆիի, Գորկիի, Թբիլիսիի): Կամ՝ աճ, յաճ հոլովման բառերը եղակի գործիականում, ըստ օրենքի, պետք է ունենան աւթ-յաւթ ձևը (շարժմամբ, արյամբ), բայց այժմ շատ հաճախ դրականության մեջ էլ ունենում են ով վերջավորությունը (շարժումով, արյունով և այլն): Այդպիսի բաղմաթիվ օրինակներ կարելի է բերել նաև բայերի խոնարհումներից, երբ մի խոնարհման բայն սկը-



առւմ է խոնարհվել մի ուրիշ խոնարհումով (օր. ասացի-ասեցի-  
 ասի, բերի-բերեցի, նստավ-նստեցի և այլն): Ինչո՞ւ է այդպեա  
 կատարվում, ինչո՞ւ, օրինակ, գործիականի-ով վերջավորություն-  
 նքն է տարածվում, և ոչ՝ անը: Այն պատճառով, որ մեր լեզվի տը-  
 վյալ փուլում-ով վերջավորությունը ավելի կենսունակ է, քան  
 որևէ մեկ ուրիշը: Իսկ լեզվի մեջ որևէ երևույթի կենսունակու-  
 թյունը պայմանավորված է հիմնականում երեք բանով. որքանով  
 նա շատ է տարածված, որքանով ուժեղ է նրա դիտակցումը խո-  
 սող հանրության մեջ և որքանով է ընդունված հանրության  
 մեծամասնության կողմից: Այս երեք կողմերով եթե քննենք  
 գործիական հոլովի տարբեր վերջավորությունները, կտեսնենք,  
 որ առավել, կամ գուցե միակ, կենսունակը-ով ժամանակն է, որով-  
 հետև նրանով է կազմվում ժամանակակից հայերենի գոյական-  
 ների եղակի գործիականը (բոլոր հոլովումները, բացի-ան,յան հո-  
 լովումից), իսկ հոգնակի գործիականը՝ բացառապես նրանով է  
 կազմվում: Եվ, ահա, հենց այն պատճառով, որ նա առավել կեն-  
 սունակ է, համաբանությամբ տարածվում է նաև այնպիսի բա-  
 ռերի վրա, որոնք, ըստ օրինի, չպիտի ենթարկվեին դրան: Ու-  
 ընմն համաբանության շնորհիվ կարող են տարածվել այն երե-  
 վույթները միայն, որոնք լեզվի տվյալ փուլում առավել կենսու-  
 նակ են: Բայց միայն այդքանը դեռ բավական չէ. ինչպես տե-  
 սանք, -ով ժամանակը միանգամայն կենսունակ է և համաբանու-  
 թյամբ տարածվում է նաև-ան,յան, հոլովման բառերի վրա.  
 Բայց կարող ենք այսօր արդեն ասել, թե այդ հոլովումների գոր-  
 ծիականը ստանում է-ով վերջավորությունը. ո՛չ: Բանն այն է,  
 որ այսօր արյամբ և արյունով, շարժման և շարժումով ձևերը դեռ-  
 ևս համագոյակից են. դեռևս նրանցից մեզը մյուսին դուրս չի  
 մղել լեզվից: Իսկ այդ տեղի է ունենում համեմատաբար երկար  
 ժամանակի ընթացքում, երբ տվյալ նոր ձևը տարածվում, ընդ-  
 հանրացում է ստանում: Այդ՝ շարժումով, արյունով ձևերը դեռ-  
 ևս ընդհանուր չեն նախ այն պատճառով, որ դրանց զուգընթաց  
 թեև ավելի սակավ, գործածվում են նաև արյամբ, շարժմամբ  
 ձևերը. մյուս կողմից դրանց զուգընթաց ունենք փաշարյամբ,  
 մեծուքյամբ, վեհուքյամբ և այլ բազմաթիվ բառերի այս ձևերը,  
 որոնք առայժմ ավելի հաճախ են գործածվում, քան փաշարյու-  
 նով, մեծուքյունով և այլն: Նշանակում է, այստեղ ևս անհրա-



ժեշտ է նոր ձևի առավել հաճախ գործածումը, այսինքն՝ հետեւ-  
 վողականություն, և նրան ենթարկվող օրինակների թվական գե-  
 րազանցություն: Այդ փոփոխությունը կդառնա ընդհանուր մե-  
 աշն աշն ժամանակ, երբ-ան-յան հոլովման բառերի գործիակա-  
 նը առավել հաճախացող գործածությամբ կընդգրկի այդ հոլով-  
 ման բառերի մեծագույն մասը: Բայց այդ նշանակում է նաև մի  
 ուրիշ բան. համարանության շնորհիվ աստիճանաբար տարած-  
 վելով և ստանալով քանակական գերակշռություն նախկին օրեն-  
 քի նկատմամբ՝ նոր երևույթը հանդես է գալիս իբրև օրինաչա-  
 փություն՝ բռնելով հնի տեղը, վերացնելով հինը, այսինքն տե-  
 դի է ունենում բացասման բացասումը: Այսպիսով լեզվին նույն-  
 պես հատուկ են դիտելիակայի երկու հիմնական օրենքները՝ բա-  
 նակի փոխանցումը որակի և, եեւց դրան ընթացակից՝ բացասման  
 բացասումը: Իսկ այս էլ իր հերթին նշանակում է, որ քանակա-  
 կան աննկատելի փոփոխությունները կուտակվելով անաշ են  
 բերում լեզվի մեջ որակական փոփոխություններ, որոնք հանդի-  
 սանում են թռիչքային մոմենտների, լեզվի պատմության մեջ,  
 որոնք անաշ են բերում ամբողջ հեղաշրջումներ լեզվի մեջ: Հե-  
 տեաքար լեզվին հատուկ է թե՛ հվոլուցիան, և թե՛ ուղղուցիան.  
 և . . . Դիտելիական դարձացման պրոցեսը դիտում է ոչ թե  
 որպես աճման հասարակ պրոցես, որտեղ քանակական փոփո-  
 խությունները չեն աճանում դեպի որակական փոփոխություններ,  
 —այլ որպես այնպիսի դարձացում, որն աննշան և ծածուկ քա-  
 նակական փոփոխություններից անցնում է բացարձակ փոփո-  
 խությունների, արժատական փոփոխությունների, որակական  
 փոփոխությունների, որտեղ որակական փոփոխությունները  
 կատարվում են ոչ թե աստիճանաբար, այլ արագ, հան-  
 կաբժ, մի վիճակից մյուս վիճակին թռիչքային անցման ձևով  
 կատարվում են ոչ թե պատահաբար, այլ օրինաչափ կերպով,  
 կատարվում են աննկատելի և աստիճանական քանակական փո-  
 փոխությունների հետևանքով<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու լեզվի մեջ  
 տվյալ ժամանակում այս փոփոխությունն է առաջանում և ոչ  
 մեկ ուրիշը, ապա դրա հիմնական պատճառն ավանդության և ավան-

<sup>1</sup> ՀամԿ (բ) Գ Պատմություն, Երևան, 1938, էջ 143.



գախախտության պայքարն է, որ տուաջ է քաշել և փայլուն կերպով բնութագրել Գուրգեն Սեվակը: Ավանդությունը լեզվի տվյալ մոմենտում ունեցած ընդհանուր համակարգն է, որ պարտադիր է տվյալ լեզվական հանրության բոլոր անդամներին: Բայց այդ «պարտադիրը» ունի նաև պայմանականություն. յուրաքանչյուր անհատ, որպես հասարակական մարդ, ընդունում է այն, ինչ նրան քելագրում է ավանդությունը, բայց ընդունում է այն ակտիվ կերպով, ընդունում է ներգործելով, իր լուսան մտցնելով այն բոլորի մեջ, ինչ որ ընդունում է նա ավանդությունից:

«Ավանդության թելադրած ընդհանուր ազգային լեզուն բեկվում, կոնկրետանում, անհատականանում է առանձին անհատների մոտ՝ վերջիններիս, գլխավորաբար և հիմնականում, դասակարգային գոյի և առաջ երկրորդական դասազան գործոնների (ընդհանուր զարգացում, միջավայր, արտաբերական գործարանների վիճակ և այլն) բովի միջից անցնելով:

«Այսպիսով տեղի է ունենում ավանդախախտում ավանդության ընդունման իսկ պրոցեսում... Ավանդափոխությունը... վերաբերում է լեզվի թե՛ բովանդակությանը, և թե՛ ձևին, ըստ որում բովանդակության բնագավառում տեղի ունեցող ավանդախախտումը պայմանավորված է անհատի գերազանցապես հասարակական գոյով, արտացոլում է այդ գոյը<sup>1</sup>: Ահա հենց այդ գոյի շնորհիվ կատարվող լեզվի զարգացումը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է, որ լեզվի յուրաքանչյուր փուլը գիտենք հասարակական գոյի համապատասխան փուլի՝ հասարակական համապատասխան ֆորմացիայի հետ ունեցած անխզելի կապի մեջ:

Լեզուն ցեղային հասարակության մեջ. — Մարդկային հասարակության առաջին ֆորմացիան նախնական կոմունիզմն է, նախնական անդասակարգ հասարակությունը: Բնականաբար այդ շերջանում լեզուն էլ դասակարգայնորեն տարբերակված չի եղել, բայց զրա փոխարեն եղել են այլ կարգի տարբերակումներ, որոնք այդ շրջանի հասարակական գոյի և հասարակական գիտակցության արտահայտությունն են հանդիսացել: Այսպես, օրինակ, այդ շրջանի

<sup>1</sup> Գ. Սեվակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Նրևան, 1939 թ., էջ 32—33.



մարդու գիտակցութեանը հատուկ են մոգական, միասնական ու դի-  
ցարանական պատկերացումները. չկարողանալով ճշտորեն ըմբռնել  
ու գիտակցել բնութեան և հասարակական կեցութեան երևույթնե-  
րը, արտակարգ նշանակութեան են տվել մարդու հասակին և մի  
հասակից մյուսին անցնելը նույնիսկ տոնել են որոշ ծիսակատա-  
րութեաններով: Այդ բանը լեզվի մեջ արտահայտվել է այսպես  
կոչված հասակային տարբերակումով, այսինքն՝ որոշ հասակի  
մարդիկ ունեցել են լեզվի (բառապաշարի և այլն) որոշ առանձ-  
նահատկութեաններ, այլ հասակի մարդիկ՝ ուրիշ առանձնահատ-  
կութեաններ, ինչպես որ կյանքում էլ այս որոշ հասակի մարդ-  
կանց թույլատրված էին որոշ բաներ, իսկ այլ հասակի մարդ-  
կանց՝ ոչ: Այդ բանը վերապրուկների ձևով պահպանված է բազ-  
մաթիվ լեզուներում: Այսպիսի տարբերակում եղել է նաև տղա-  
մարդկանց ու կանանց լեզուներում, որ նույնպես վերապրուկա-  
յին ձևով պահպանվել է շատ լեզուներում: Այդ վերապրուկների  
ուսումնասիրութեանն ու հայտարարումը բազմաթիվ, նույնիսկ  
զարգացման բարձր աստիճանի վրա գտնվող լեզուներում ցույց  
է տալիս, որ լեզվաստեղծական պրոցեսում և լեզվի զարգացման  
նախնական փուլում այդ երևույթն ընդհանուր է եղել բոլոր  
լեզուներին:

Հետագա զարգացմամբ նախնական մարդկային հորդաներից  
հետզհետե առաջանում են ցեղերն ու տոհմերը: Յեղային շրջա-  
նում լեզվի զարգացման միասնական պրոցեսն ավելի քան ակն-  
բախ է դառնում. ըստ որում այստեղ մենք հանդիպում ենք  
երկու հակադիր պրոցեսների. մի կողմից ցեղերը բազմանելով  
բաժանվում և առաջ են բերում նորանոր ցեղեր, որոնք հետ-  
զհետե բոլորովին առանձնանում, օտարանում են իրենց երբեմնի  
արենակից ցեղերից և այս շրջանում իհարկե նրանց լեզուն էլ  
աստիճանաբար տարբերակվում է, վերածվում է նախ բարբառ-  
ների, ապա, առանձին լեզուների. «Հյուսիս-ամերիկյան հնդկացի-  
ների մեջ մենք տեսնում ենք, թե ինչպես ցեղերը բաժանվելով,  
ժողովուրդների, ցեղերի ամբողջ խմբեր են դառնում, լեզուները  
փոխվում են, մինչև որ նրանք էլ միմյանց համար անհասկա-  
նալի են դառնում, այլևս անհետանում է նրանց սկզբնական



միության համարյա ամեն մի հետք»<sup>1</sup> Մյուս կողմից, հետագայում այդ բաժան-բաժան եղած ցեղերը վերստին համախմբվում են ցեղային միությունների մեջ, և համապատասխան կերպով նրանց լեզուներն էլ աստիճանաբար խաչավորվում են՝ առաջ բերելով բազմաթիվ ընդհանրություններ: «Որոշ վայրերում ազգակից ցեղերը, հաղթահարելով բաժան-բաժան եղած վիճակը կրկին միանում և տեական դաշինք են կապում և դրանով առաջին քայլն անում դեպի ազգությունների կազմությունը: Միացյալ նահանգներում այդպիսի միության ամենազարգացած ձևը մենք գտնում ենք իրոկեզների մեջ: ...Այդ միության հիմնական սկզբունքները հետևյալներն են. 1) Հինգ արենակից ցեղերի հավիտենական միություն՝ լիակատար հավասարության և անկախության հիման վրա բոլոր ներքին գործերի վերաբերմամբ: ... Նրանց ընդհանուր ծագման արտահայտությունն ու ապացույցը նրանց լեզուն էր, որ միայն բարբառներով էր տարբերվում իրարից»<sup>2</sup> Նույն երևույթը տեսնում ենք հին հույների մոտ, սլավոնների մոտ և այլուր՝ տոհմային կազմակերպության շրջանում: Նշանակում է՝ այս երևույթը՝ բաժանում և խաչավորում ու ձուլում, նույնպես ընդհանուր, միասնական է լեզվի զարգացման պրոցեսում՝ բոլոր լեզուների համար:

Լեզուն անտիկ հասարակության մեջ.—Լեզվի զարգացման ձևերը՝ որպես միասնական պրոցեսի դրսևորումներ, է՛լ ավելի ակնբախ կերպով ներկայանում են մեզ անտիկ աշխարհի ստրկատիրական հասարակության մեջ: Առաջին մեծ հեղաշրջումը լեզվի մեջ, որ կատարվում է նախնադարյան անդասակարգ հասարակությունից ստրկատիրական հասարակարգին անցնելով, լեզվի երկփեղկումը, տարբերակումն է գասակարգայնորեն: Ստրկատիրական հասարակության լեզուն յուր բովանդակությամբ ու ձևով արտահայտում է ստրկատիրերի ու ստրուկների հարաբերությունը: Դրանց զուգընթաց առաջ է գալիս բազմաթիվ ցեղային ու տոհմային լեզուների աստիճանական ձուլում և ընդհանուր, միջտոհմային լեզվի առաջացումը, որ արդյունք է ստրկատիրական պետականության ստեղծման: Այսպես, օրինակ,

<sup>1</sup> Ֆ. Է. Ն. Գ. Է. Լ. Ս., Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1932, էջ 11:

<sup>2</sup> Անդ, էջ 109—110:



Հունաստանում զանազան տոհմերի նախնական միությանը հա-  
ջորդում է ստրկատիրական կենտրոնական իշխանությունը, որ  
ավելի քան ուժեղացնում է այդ տոհմերի խառնվելն ու ձուլումը՝  
Համապատասխան կերպով էլ ստեղծվում է ստրկատիրական հա-  
սարակարգի ընդհանուր լեզուն. զանազան ցեղային ու տոհմային  
լեզուների ու բարբառների խաչավորմամբ զարգանում է միջ-  
տոհմային կոյնն լեզուն, որ դառնում է ընդհանուր պետական,  
կուլտուրայի ու զրականության լեզու. հունական պետականու-  
թյան մեջ միավորված ամբողջ տերիտորիայում Այդ նույն երե-  
վույթը տեղի է ունեցել նաև Հռոմի կայսրության շրջանում,  
որտեղ ընդհանուր պետական ու կուլտուրայի լեզուն դարձավ  
լատիներենը, նույնը կատարվել է նաև Հին Հնդկաստանում, ուր  
այդպիսի լեզու է դարձել սանսկրիտը:

Սակայն ստրկատիրական հասարակարգի այդ ընդհանուր  
լեզուն դեռևս կատարելապես ընդհանուր չէ. նա անպարեզից  
դուրս է մղում ցեղային լեզուներն ու բարբառները: Բայց դեռևս  
լիովին ձուլել իրեն, վերացնել նրանց՝ չի կարողանում Այսպես  
օրինակ, կոյնեն դարձավ ընդհանուր պետական լեզու և հետ մղեց  
հունական բարբառները, բայց նրանք դեռևս չվերացան. ավե-  
լին, նոր հունարեն բարբառների մեջ կարելի է գտնել այդ հին  
բարբառների (օր. դորիական) բազմաթիվ հետքերը: Այդպես էլ  
լատիներենը չկարողացավ վերացնել ցեղային լեզուներն ու բար-  
բառները, և Հռոմի կայսրության կործանումից հետո այդ ցե-  
ղային լեզուների հիմամբ ու ժողովրդական լատիներենի ուժեղ  
ազդեցությամբ զարգացան ռոմանական լեզուները: Այս երևույ-  
թը նույնպես ընդհանուր է բոլոր լեզուների համար. միայն թե  
ամեն մի կոնկրետ դեպքում պետք է գտնել զրա պատմահասա-  
րակական արմատները:

Լեզուն ֆեոդալական [հասարակությամբ մեջ. — Ֆեոդալական  
հասարակարգում ինչպես ինքը հասարակությունը, այնպես էլ  
լեզուն շարունակում է դասակարգայնորեն երկատված մնալ.  
բայց եթե նախորդ աստիճանում նա այդ երկատվածությամբ  
արտահայտում էր ստրկատիրական հասարակարգի հարաբերու-  
թյունը, ապա այս աստիճանի վրա նա արտահայտում է ֆեո-  
դալական հասարակարգի՝ ֆեոդալների ու ճորտ գյուղացիության  
հարաբերությունները: Ֆեոդալիզմի շրջանում լեզվի զարգացման



մեջ նկատվում են երկու հակադարձ երևույթներ, որոնք արդյունք են ֆեոդալական պետական կառուցվածքի:

Կազմավորված ֆեոդալական կենտրոնական իշխանությունը պահպանում է ընդհանուր լեզուն յուր տիրապետության սահմաններում, իբրև այդ պետության տարբեր մասերի՝ իշխանությունների, կուսակալությունների ընդհանուր հաղորդակցման միջոց, իբրև այդ բոլորն իրար կապող օղակ:

Սակայն ֆեոդալական հասարակությանը հատուկ է պետական, քաղաքական ու տերիտորիալ կարգավածությունը: Նախկին ստրկատիրական հասարակարգի ավերակների վրա բարձրանում են բազմաթիվ մանր ու մեծ իշխանություններ, կուսակալություններ, բզեշխություններ, որոնք վասսալական կախման մեջ են կենտրոնական իշխանությունից, բայց և՛ աչքի են ընկնում իրենց կենտրոնախույս, ինքնուրույնության ձգտող քաղաքականությամբ: Այդ բանն ուժեղ կերպով արտահայտվում է նաև լեզվի զարգացման մեջ. ընդհանուր պետական լեզվի կողքին ազատորեն զարգանում են տեղական բարբառները, որոնք, եթե քաղաքական հանգամանքները նպաստավոր են լինում, հաճախ այնքան են հեռանում ու տարբերակվում իրարից, որ վերածվում են նույնիսկ ինքնուրույն լեզուների: Նպաստավոր հանգամանք ասելով հասկանում ենք այն, որ տեղական իշխանը, կենտրոնական իշխանության վասսալը, ձեռք է բերում անկախություն, որ և նպաստում է տեղական բարբառի ինքնուրույն, անկախ զարգացմանը: Այդպիսի երևույթ կարելի է տեսնել ամեն տեղ: Հռոմեական կայսրության ավերակների վրա բարձրանում են գերմանական ցեղերի բարբարոսական թագավորությունները, որոնցից յուրաքանչյուրը շարունակում է ազատորեն զարգացնել իր բարբառը: Վաղ միջնադարին հատուկ են տեղային բարբառների բազմազանությունն ու դրանց զարգացումը: Այսպիսով՝ ֆեոդալական հասարակության մեջ ուժեղանում է լեզվի տարբերակումը և՛ դասակարգայնորեն, և՛ տեղայնորեն: Այդ նույն բանը կարելի է դիտել նաև Հայաստանում, ուր ընդհանուր գրաբար լեզվի կողքին գոյություն ունեն դեռևս բազմաթիվ ցեղային լեզուներն ու տեղական խոսվածքները: Հետագայում, ֆեոդալական հասարակարգի թուլացման, ֆեոդալական կենտրոնական իշխանության անկման ժամանակաշրջանում ազատորեն



զարգանում են տեղային բարբառները և միջնադարում մենք արդեն գրականության մեջ որոշակիորեն տեսնում ենք տարբեր բարբառների գոյությունը:

Մյուս կողմից պետք է ուշադրության առնել ֆեոդալական հասարակարգի գրական լեզվի առանձնահատկությունը: Նախ՝ գրական լեզուն, ինչպես և ինքը գրականությունը, մատչելի չէ գեղջուկ մասսաներին: Հենց դրա շնորհիվ էլ շատ շուտով նրա և ժողովրդական խոսակցական լեզվի միջև ստեղծվում է անանցանելի անջրպետ: Դրա հետևանքը լինում է այն, որ գրական լեզուն դադարում է խոսակցական լինելուց, դառնում է մեռած, այսպես կոչված միայն գրոց (գրականության) լեզու, որ և իրենց սեփական են դարձնում ֆեոդալներն ու կղերականները: Այդպես է ընթացել գրաբարի դարգացումը: Նկատելի է նաև այն երեվույթը, որ ֆեոդալական թագավորությունները կարող են իբրև գրական լեզու յուրացնել մի բոլորովին ուրիշ, բայց կուլտուրային և քաղաքականապես մեծ դեր խաղացած կամ խաղացող ժողովրդի գրական լեզու: Այսպես էր, օրինակ, Նվրոդայում, ուր լատիներենը գրական լեզու էր դարձել ֆեոդալիզմի շրջանում բազմաթիվ թագավորությունների համար, Միջնադարյան Ռուսաստանում՝ հին սլավոններենը, որ հիմնված էր բուլղարական բարբառներից մեկի վրա, միջնադարի մահմեդական արևելքում՝ արաբներենը, ապա՝ պարսկերենը և այլն:

Վերջապես, հենց ֆեոդալական հասարակության ներսում զարգանում է մի նոր ուժ՝ առևտրական կապիտալիզմը: Քաղաքների զարգացմամբ և առևտրի ավելի ու ավելի աճմամբ խորտակվում են իրարից կտրված իշխանությունների, կուսակալությունների ու լորենիությունների միջև եղած մեկուսիչ պատվարները: Առևտրական հարաբերությունների զարգացման շնորհիվ էլ ավելի զարգանում են քաղաքները՝ դառնալով տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի կենտրոններ, զարգանում են քաղաքի ու գյուղի և առանձին վասսալությունների միջև ամենօրյա տնտեսական ու քաղաքական հարաբերությունները և այդ շփման հետևանքով տարբեր տեղային բարբառների միջև դանդաղորեն, բայց հաստատապես ստեղծվում են որոշ ընդհանրություններ, հետզհետե հիմք հանդիսանալով մի նոր ընդհանուր լեզվի առաջացման:



Լեզուն կապիտալիստական հսկողականության մեջ. ազգային  
 լեզուների առաջացումը. գրական լեզու և բարբառներ. — Առևտրա-  
 կան կապիտալի դարձացման հետևանքով, տնտեսական կյան-  
 քում արդեն իսկ մեծ դեր խաղացող նոր դասակարգը՝ բուր-  
 ժուազիան, ազգային-ազատագրական շարժումների միջոցով վեր-  
 ջապես հասնում է լիակատար հաղթանակի՝ ֆեոդալիզմի նկատ-  
 մամբ: Բուրժուական հասարակարգի հաղթանակը նշանավորվում  
 է մարդկային հանրության մի նոր ձևի՝ ազգի կազմավորմամբ:  
 Բնականաբար հասարակության կյանքում եղած նոր հարաբե-  
 րությունները նոր բովանդակություն են տալիս նաև լեզվին,  
 ինչպես և՛ նոր կարգի տարրերակման հնթարկում լեզուն: Կա-  
 պիտալիզմի դարաշրջանի լեզուն արտահայտում է կապիտալիս-  
 տական հասարակարգին հատուկ հարաբերությունները: Լեզուն  
 կապիտալիստական հասարակության մեջ ստանում է ընդհանուր  
 ազգային բնույթ. յուրաքանչյուր ազգի կազմավորման հետ  
 կազմավորվում է նաև նրա ազգային լեզուն, որ հանդես է գա-  
 լիս իբրև ազգի ընդհանուր ու միասնական լեզու: Որպես այդ-  
 պիսին նա մի կողմից հարկադրվում է նախորդող շրջանի տոհ-  
 մական ու ցեղային լեզուներին, մյուս կողմից՝ յուր ներսում  
 եղած բարբառներին, որոնք աստիճանաբար միասնություն են  
 կազմում նրա հետ ու դառնում նրա՝ որպես ընդհանուրի՝ մաս-  
 նավորները, այդպիսով իսկ պահպանելով իրենց գոյությունը:  
 Ազգային լեզուն դասակարգայնորեն տարրերակված է հասարա-  
 կության համապատասխան: Լինելով միասնական իր ձևով, քե-  
 րականությամբ և նույնիսկ բառապաշարի մեծ մասով, նա  
 տարրերակված է ըստ բովանդակության. այլ բովանդակություն  
 ունի բուրժուական դասակարգի լեզուն, այլ բովանդակություն՝  
 պրոլետարիատի լեզուն, այլ բովանդակություն՝ մանր բուրժուա-  
 ազիայի լեզուն: Ահա թե ինչու Մարքսն ու Էնգելսն ասում են,  
 «Բուրժուազիան կարող է առանց դժվարության իր լեզվի հի-  
 ման վրա ապացուցել տուր և առի (մերկանտիլ) և անհատական,  
 կամ նույնիսկ հանրամարդկային, հարաբերությունների նույնու-  
 թյունը, քանի որ այդ լեզուն ինքը բուրժուազիայի արտադրանքն  
 է և դրա համար էլ, ինչպես իրականության, այնպես էլ լեզվի



մեջ տուր և առի հարաբերությունները մյուս բոլոր հարաբե-  
րությունների հիմքն են դարձելը.<sup>1</sup>

Ազգային լեզուների կազմավորումն, իբրև մի պատմական  
պրոցես, տարբեր ընթացքով ու տարբեր ձևով է կատարվում:  
Դա պայմանավորված է իր իսկ՝ ազգի կազմավորման պրոցեսով:  
Մարքսն ազգային լեզուների կազմավորման երեք ուղի է նշում.  
պատրաստի նյութի զարգացում, լեզուների խաչավորում ու խառ-  
նում, բարբառների համակենտրոնացում. «Ժամանակակից դար-  
գացած յուրաքանչյուր լեզվի մեջ նախնական, տարերայնորեն  
առաջ եկած լեզուն բարձրացել է մինչև ազգային լեզվի աստի-  
ճանը, մասամբ շնորհիվ լեզվի պատմական դարգացման՝ պատ-  
րաստի նյութից, ինչպես այդ տեսնում ենք ուսմանական ու գեր-  
մանական լեզուների մեջ, մասամբ շնորհիվ ազգերի խաչավոր-  
ման ու խառնման, ինչպես անգլերեն լեզվի մեջ, մասամբ շնոր-  
հիվ բարբառների համակենտրոնացման ի միասնական ազգային  
լեզու՝ տնտեսական և քաղաքական համակենտրոնացման հետե-  
վանքով».<sup>2</sup>

Կապիտալիստական հասարակարգի գրական լեզուն է լի-  
նում սովորաբար ազգային լեզուն, որը տիրապետող դասակար-  
գերի ձեռքում դառնում է իր իսկ տիրապետությունը պահպա-  
նելու լծակներից մեկը: Բուրժուազիան ձգտում է յուր սեփա-  
կանությունը դարձնել ազգային գրական լեզուն: Դրան հակառակ՝  
շահագործվող դասակարգերի ձեռքում լեզուն դառնում է պայ-  
քարի գենը: Նրանք էլ իրենց հերթին պայքարում են հանուն  
հանրամատչելի գրական լեզվի: Սրա արդյունքը հաճախ այն է  
լինում, որ գրական աստիճանին են սկսում բարձրանալ առան-  
ձին բարբառները: Սրա լավագույն օրինակը տալիս է նախա-  
ռևտյուցիոն շրջանի հայ գրական լեզուն. ազգային գրական լեզ-  
վի կողքին մի կողմից ստեղծվում է գյուղագրության լեզու,  
մյուս կողմից՝ գրականություն է ստեղծվում առանձին բար-  
բառներով (Թբիլիսիի, Ղարաբաղի և այլն):

Վերջապես կապիտալիստական հասարակարգում է սկսվում  
մասնագիտական լեզուների ուժեղ դարգացումը, ինչպես և այս-

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Немецкая идеология, стр. 200.

<sup>2</sup> Архив, т. IV, стр. 490.



պես կոչված պայմանական լեզուների կամ ծածկալեզուների զարգացումը. դրանք թեև կարող են գոյութիւն ունենալ նաև ֆեոդալիզմի օրոք, բայց բուրժուական հասարակարգում ստանում են սոցիալական յուրահատուկ բովանդակութիւն: Ծածկալեզու են ունենում այն հասարակական խմբավորումները, որոնք ձգգտում են հասարակութիւնից առանձնանալու, մեկուսանալու, այսինքն գերադասեցապես՝ ապադասակարգայնացած խմբավորումները (օրինակ՝ գողերի լեզուն):

Ազգային փոքրամասնութիւնների և գաղութային ժողովուրդների լեզուները կապիտալիստական հասարակարգում. — Մինչև այժմ մենք խոսեցինք կապիտալիստական հասարակարգի ազգային լեզվի մասին՝ ցույց տալով նրա ներքին հակասութիւնները: Բայց կապիտալիստական հասարակարգում խիստ հակասութիւններ են ստեղծվում նաև դանազան ազգային լեզուների միջև: Կապիտալիստական դադութակալական քաղաքականութիւնը բերում է բազմաթիվ ազգերի ու ժողովուրդների ստրկացում՝ տնտեսական, քաղաքական ու ռազմական տեսակետից մի քանի հզօր ազգերի կողմից: Այդ բանը լեզվի մեջ արտա-հայտվում է նրանով, որ տիրապետող ազգի լեզուն նեղում է տիրվող ազգերի լեզուներին: Այդ հատկապես կատարվում է պետական լեզվի միջոցով: Բուրժուական հասարակարգում մի պետութեան հպատակեցված բազմաթիվ ազգերի ու ցեղերի համար պետական լեզու է հանդիսանում նվաճող ազգի պետական-ազգային լեզուն, որ և աստիճանաբար ասպարեզից դուրս է մղում նվաճված ազգերի ազգային կամ ցեղային լեզուները:

Բուրժուական հասարակարգում նվաճված ազգերի ու ցեղերի՝ ազգային փոքրամասնութիւնների լեզուների գոյութեան երկու հիմնական ձև է նշվում: Առաջինն է այն, երբ համեմատաբար փոքր թիվ կազմող ազգային փոքրամասնութիւնը կուլտուրապես էլ ցածր լինելով, աստիճանաբար յուրացնում է տիրող լեզուն: Իրա հետևանքով այդպիսի ազգային փոքրամասնութեան լեզուն աստիճանաբար իջնում է միայն խոսակցական բարբառի աստիճանին և գնում դեպի լիակատար մահացում: Այդպիսի վիճակում է գտնվում բրետներենը՝ Ֆրանսիայում:

Երկրորդն այն է, որ նվաճված ազգային փոքրամասնութիւնը գտնվում է տնտեսական և կուլտուրական զարգացման



բարձր մակարդակի վրա, թվական տեսակետից նույնպես ան-  
նշան չէ և յուրացնելով տիրողի լեզուն, պահպանում է նաև  
իրենը: Այս դեպքում էլ, իհարկե, նա զրկված է զարգացման  
ազատ հնարավորությունից և դիմադրության շնորհիվ միայն  
պահպանում է իր գոյությունը: Այդ վիճակի մեջ էին հայերենը,  
վրացերենը, ուկրաիներենը և բազմաթիվ այլ լեզուների ցարա-  
կան Ռուսաստանի տիրապետության տակ:

Բուն գաղութային երկրներում նույնպես լեզուների ճնշ-  
վածության երկու ձև ենք նկատում: Մի դեպքում, երբ գաղու-  
թային ժողովուրդը գտնվում է տնտեսական ու կուլտուրական  
զարգացման բարձր աստիճանի վրա, գաղութացման հետևանքով  
է՛լ ավելի զարգանալով և կաղմավորվելով իբրև ազգ, ստեղծում  
է յուր ազգային լեզուն: Այդպես է Հնդկաստանում: Մյուս դեպ-  
քում, երբ գաղութային ժողովուրդը ցածր մակարդակի վրա է  
գտնվում, նվաճողների և նվաճվողների լեզուների խառնուրդով  
ստեղծվում է մի նոր, ընդհանուր լեզու այդ երկու միավորների  
համար. այդպիսի լեզուներ են «Բիչ-լամար»-ը՝ Սադադ օվկիա-  
նոսում, «Պիջին-ինգլիշը» Հեռավոր Արևելքում և այլն, որոնք  
ստեղծվել են անգլերենի և գաղութացված երկրների լեզուների  
հատկանշական խառնուրդով: Այդ խառնուրդ լեզուների հատկա-  
նշական կողմն է պարզությունը. դրանց բառապաշարը սովորա-  
բար անգլերեն լեզվինն է, քերականությունը՝ տեղական լեզու-  
ներինը:

Լեզուն սոցիալիստական հասարակության մեջ. — Պրոլետա-  
րական ռևոլուցիան և դրա հետևանքով՝ պրոլետարական դիկ-  
տատուրայի ստեղծումը նոր հունի մեջ դրեց ինչպես ժողովուրդ-  
ների տնտեսական-քաղաքական կյանքը, այնպես էլ բոլոր վեր-  
նաշենքային երևույթները, այդ թվում և լեզուն: Սովետական  
կարգերի գոյության այս երեսուն տարիների ընթացքում լեզվի  
զարգացման պրոցեսը կարելի է բաժանել երկու շրջանի: Առա-  
ջինն ընդգրկում է այն շրջանը, երբ մեր երկրում դեռևս գո-  
յություն ունեին շահագործող դասակարգերը. այդ շրջանում,  
բնականաբար, մեր խոսակցական ազգային լեզուները դեռևս  
ըստ բովանդակության դասակարգայնորեն երկատված էին:  
Երկրորդ շրջանն այն է, երբ շահագործող դասակարգերը մեր  
երկրում վերացել են, այլևս գոյություն չունեն: Բնականաբար



այս շրջանում մեր ազգային լեզուներն էլ ըստ բովանդակութեան երկատված չեն. նրանք բոլորն էլ սոցիալիստական բովանդակութիւն ունեն:

Այլ պատկեր են ներկայացնում ազգային գրական լեզուները: Պրոլետարիատի դիկտատուրայի ստեղծման հետ անողորմ պայքար է մղվում շահագործող դասակարգերի դեմ՝ հանուն դրանց վերացման: Այդ պայքարը բացառում էր հակասովետական պրոպագանդայի հնարավորութիւնները: Սրա արդյունքն այն էր, որ ազգային գրական լեզուները դարձան միայն և միայն պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիութեան սեփականութիւնը՝ հենց ՆէՊ-ի շրջանում: Գրական լեզուները դարձան ազգային ըստ ձևի, և պրոլետարական՝ ըստ բովանդակութեան: Սոցիալիզմին անցնելով, նրանք՝ պահպանելով իրենց ազգային ձևերը, բովանդակութեամբ սոցիալիստական դարձան:

Սոցիալիստական հասարակութեան մեջ լեզուների դարգացման բնորոշ գծերից մեկն է այն, որ զանազան ազգային լեզուների մեջ այլևս հակամարտութիւններ չկան: Նրանք մեր երկրում ստացել են զարգացման ամենամեծ հնարավորութիւններ: Ավելին. մինչև Հոկտեմբերյան Ռևոլուցիան բազմաթիվ ճնշված ազգային փոքրամասնութիւնների այբուբեն չունեցող լեզուները ստացան այբուբեն ու դարձան գրական լեզուներ: Միայն սոցիալիստական հասարակութիւնն է, որ զարգացման լիակատար հնարավորութիւններ ու իրավական հավասարութիւն է տալիս մեր երկրի բազմաթիվ լեզուներին:

Այլ ընթացք են ստացել նաև բարբառները. ազգային լեզուները մեզ մոտ աստիճանաբար ավելի ու ավելի ընդհանրանում են, դառնալով համազգային լեզու: Դրան զուգընթաց բարբառներն աստիճանաբար մահանում են՝ տեղի տալով համազգային դարձող գրական լեզվին: Վերջապես, դրան հակառակ վիճակ են ապրում մասնագիտական լեզուները, գիտութեան և տեխնիկայի աննախընթաց զարգացումը ավելի ու ավելի հարստացնում, ճշգրտացնում է մասնագիտական լեզուների բառապաշարը. սակայն այդ մասնագիտական լեզուները նույնպես մեր երկրում ունեն սոցիալիստական բովանդակութիւն:

Սոցիալիստական հասարակութեան զարգացումն ընթանում է դեպի ապագայի համաշխարհային միասնական կոմունիստա-



կան հասարակարգը, դեպի ազգերի ու ժողովուրդների ձուլումը մի միասնական հասարակության մեջ: Այդ ուղին են անցնելու նաև ժամանակակից բազմաթիվ լեզուները: Ազգային լեզուների խաչավորումներով ու խառնումներով պետք է ստեղծվի ապագա միասնական հասարակության համամարդկային մի լեզու, ռորը, իհարկե, չի լինի ոչ վերիկոուսական, ոչ գերմանական, այլ մի ինչ-որ նոր բան:<sup>1</sup>

Ահա համառոտ նկարագրությունը պատմական այն ուղու, որ անցել և անցնում են աշխարհիս բազմաթիվ ու բազմազան լեզուները: Այդ նկարագրությունն առաջին հերթին ցույց է տալիս, որ նախնական հասարակության բազմաթիվ ու բազմազան լեզուների զարգացումը դեպի ցեղային ու ազգային լեզուները, ապա և՛ դեպի ապագայի համամարդկային լեզուն, ճշտորեն համապատասխանում է մարդկային հասարակության զարգացման ընթացքին՝ նախնադարյան հորդաններից դեպի ցեղերը, ժողովուրդները, ազգերը և ապագայի միասնական հասարակությունը:

Ապա՝ այդ նկարագրությունը ցույց է տալիս, որ զարգացման այդ ուղին հատուկ է բոլոր լեզուներին, ուստի և լեզվաստեղծական (գլոտոգոնիական) ու լեզվի զարգացման օրինաչափություններն ընդհանուր են, միասնական: Այս իր հերթին նշանակում է, որ ամենատարբեր կառուցվածք, ձևաբանական ամենատարբեր համակարգ ունեցող լեզուներն անցնում են միևնույն ուղին:

Լեզուն, բոլոր մյուս վերնաշենքային երևույթների հետ, իր զարգացմամբ պայմանավորված է մարդկանց նյութական կյանքով, հասարակության կեցությամբ: Հասարակական կեցության կրած փոփոխություններին զուգընթաց լեզուն էլ ենթարկվում է փոփոխությունների, մի որակական վիճակից մի այլ որակական վիճակի անցնելով: Այդ անցումները կատարվում են թռիչքային ձևով: Այդ որակական անցումների, թռիչքների միջև ընկած լեզվական յուրաքանչյուր փուլը Մաուր կոչում է ստադիա: Լեզուների զարգացման ստադիալականությունը լեզվաստեղծական պրոցեսի և լեզվի զարգացման օրինաչափությունների

<sup>1</sup> Ի. Վ. Սոսային, Լեռնիդմի հարցերը, Երևան, 1937 թ., էջ՝ 638:



միասնութեան ամենացայտուն արտահայտութեաններէց մեկն է: Այդ չի նշանակում, իհարկե, թե լեզվի զարգացման ստադիա-  
լականութիւնը պետք է անպայմանօրէն արտահայտվի նրա  
ձևաբանական կառուցվածքի անցումներով. ոչ. ստադիալակա-  
նութեան այդպիսի ըմբռնումը կլինի միանշամայն գռեհիկ և  
հակադիտական: Միևնույն ձևաբանական կառուցվածքը պահ-  
պանելով լեզուն կարող է մի ստադիայից մյուսին՝ անցնել  
բարձրին անցնել. այդպես են սոցիալիստական դարաշրջանի  
հայերենը, ռուսերենը, վրացերենը և այլն, որոնք պահպանելով  
նախառնուրդիոն ձևաբանական կառուցվածքը, անցել են մի  
նոր, ավելի բարձր ստադիայի:





ՏԵԽ. ԽՄԲԱԳԻՐ՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ  
ՍՐԲԱԳՐԻԶ՝ Ա. ԱՐԶԱՔԱՆՅԱՆ

Հանձնված է տպագրության 19/XII 1947 թ., ստորագրված է տպագրության  
5/1 1948 թ., ՎՃ 01907, պատվ. 896, հրատ. 490, տիրած 2500,  
տպագրական  $3\frac{3}{4}$  ժամուկ, 1 ժամուկում 36480 տպ. նիշ:

---

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Արտվյան 104




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0013502



4126 8-11 304.



12662